



Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է

բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

<https://grqaser.org/hy/donate>

Ստուգված

Հայ գրականություն, Ուղեգրություն, Արձակ
13+

Շիրվանզադե Օտար վայրերում

ԴԵՊԻ Կ. ՊՈԼԻՍ

1919 թ. օգոստոսի վերջին օրն էր, երբ իտալական «Ֆերդինանդ» շոգենավը սկսեց դանդաղորեն հեռանալ Բաթումի նավահանգստից: Մեծ էր նա, գեղեցիկ, մաքուր և մի հինգ հարկանի տան չափ բարձր: Առաջ նա էլ պատկանել էր ավստրիական Լյուդին. պատերազմից հետո նրան գրավել էր Իտալիան, որպես հաղթության ավար, ինչպես և բոլոր մյուս նավերը Նույն ընկերության: Բայց գրավել էր նավը և ոչ նրա հոգին: Նավապետից սկսած մինչև վերջին նավաստին ատում էին Իտալիան, իրենք լինելով ազգով իտալացիներ:

Իրիկնադեմ էր. մեկն այն վերջնամառային պահերից, երբ բնությունը պնդվում է մի առանձին շքեղությամբ, կարծես մոտալուտ աշնան թախիծը մեղմացնելու համար: Արեգակն իր վերջին ճառագայթները ոսկեզօծ հովհարի ձևով տարածել էր վարդագույն երկնակամարի վրա: Ծովն անդորր էր. նրա հայելու պես հարթ և լեղակի պես կապույտ մակերեսի վրա մակույկները սահում էին լուռ ու արագ, ինչպես երկչոտ մկներ:

Մանկական երազի չափ հաճելի էր Թիֆլիսի խեղդուկ տոթերից ու թունավոր փոշիներից հետո ազաի թոքերով ծծել ծովային մաքուր, անապական օդը: Հաճելի էր մանավանդ դիտել ծովի ու երկնքի վառվռուն գույները, որ, ամեն վայրկյան փոխվում էին, ինչպես թատերական բեմի վրա: Կարծես երկու արևելյան թագուհիներ էին, որ, իրարու հետ մրցելով, ձգտում էին դիտողին շլացնել իրենց երփներանգ զգեստերով:

Բայց ի՞նչ հաճույք կարող էր փարատել այն դառը մտքերը, որ տանում էի հետս և որ ճնշում էին սիրտս կապարի ծանրությամբ: Ո՛ր էի գնում: Երկար պիտի տևեր իմ

ճամփորդությունը և ի՞նչպես պիտի տևեր: Տեսնելով՝ եմ արդյոք նորեն իմ մերձավորներին ու մտերիմներին: Եվ այն ընտանի վայրերն ու շրջանները, ուր անցել է գրեթե ամբողջ կյանքս:

Չգիտեի: Գիտեի միայն, որ փախչում էի այլևս անտանելի դարձած մթնոլորտից, ուր օր-օրի վրա ավելի ու ավելի էի զգում ուղեղիս տկարացումն ու զգացումներիս բթացումը: Փախչում էի ինքս ինձնից:

Երկու տարի շարունակ ամեն առավոտ նստել էի գրասեղանիս քով, երդվելով անպատճառ սկսել մի որևէ գործ, և ամեն անգամ գրիչն ընկել էր ձեռքիցս և գլուխս անգոր թեքվել կրծքիս: Ի՞նչ գրել և ո՞ւմ համար գրել մի կիսավեր երկրում, որ սպառնում է հիմնովին ավերվել: Գրականությամբ կերակրել մի ժողովուրդ, որի ստամոքսն է սնունդ պահանջում:

Ո՛չ, գրողը դեր չունի այստեղ, գոնե առժամանակ: Նա պետք է լռե, եթե չի կամենում իր կոչմանը դավաճանել, կամ քաղաքականությամբ զբաղվել, եթե կամենում է ատելի դառնալ ինքն իր աչքում:

Սխալ էր այս միտքը: Թող լինի: Բայց նա ծծում էր իմ մեջ եռանդս և հեռացնում ինձ գրասեղանից՝ անզորության մաղձը սրտումս:

Եվ ահա մի առավոտ ես որոշեցի այսպես թե այնպես վերջ տալ այս մղձավանջին: Ճամփորդություն-ահա ինչը գուցե կարողանա ինձ փրկել: Եվ վճռեցի ճամփորդել: Կերթամ ուրիշ երկրներ, կայցելեմ անծանոթ վայրեր, կդիտեմ, կուսումնասիրեմ: Վերջապես, կա հայ գրողի համար մի պարտականություն, որ չեմ կատարել, կկատարեմ, այն է՝ կծանոթանամ հայ ժողովրդի այն ցիրուցան բեկորներին, որ ընդհանուր անունով կոչվում է գաղթականություն:

Բյուր շնորհակալություններ այն հաստատություններին և իմ անձնական բարեկամներին, որոնք նյութապես ու բարոյապես աջակցեցին ինձ ձեռնարկելու ներկա ճամփորդությունը:

Շոգենավը մեղմիկ լողում էր, վրդովելով ծովի հանգիստն իր հսկայական մեքենաների խուլ թնդյուններով:

Առաջին կլասի ճամփորդների թիվը մեծ չէր,— մի քանի հույներ, մի քանի իտալացիներ, մի ֆրանսիացի կոմս՝ զվիցերական Կարմիր Խաչի լիազոր, երեք-չորս անխուսափելի հրեաներ և մի տասնյակ հայեր:

Հայ ուղեկիցներին մեջ կար մի զույգ, որ մի զարմանալի տաղանդով իսկույն և եթ շահեց ընդհանուրի համակրանքը: Մարդ Էակը խոսում է ոչ միայն լեզվով, այլև քայլվածքով, ձևերով ու շարժումներով: Երկուսն էլ տակավին երիտասարդ, երկուսն էլ կուշտ ու ինքնագոհ դեմքով, թեև ոչ տգեղ, բայց գեր ու ճարպոտ: Նրանք ճեմում էին տախտակամածի վրա փքված հնդկահավերի պես, աջ ու ձախ ձգելով գոռոզ հայացքները: Եվ երբ անզգուշաբար դիպչում էին մեկին, չէին բարեհաճում պարտավորական «պարդոնը» ասելու: Նրանց յուրաքանչյուր շարժումն աղաղակում էր. «Մենք հարուստ ենք, ուրեմն և ձեր ամենքիդ բարձր և ամենքիդ համար անմատչելի»:

Առավոտյան ութ ժամին շոգենավը մոտեցավ Տրապիզոնին և կանգ առավ ափից բավական հեռու:

Գեղեցիկ չէ այդ քաղաքը, բայց նրա անֆիտեստորի ձևով դիրքը, իրարու կռնակին դարսված արկղանման ճերմակ տներն իրանց անթիվ լուսամուտներով՝ ունին մի ինքնուրույն հրապույր:

Մինչ ես երևակայությամբ թափառում էի հայ արյունով ներկված փողոցներն ու տները ոճիրներով հռչակավոր քաղաքի, քովս լսեցի մի մանկան ճիչ: Նայեցի ետ և տեսա 10—11 տարեկան մի աղջիկ, որ դողդոջ ձեռներով կառչել էր մի սևազգեստ կնոջ:

— Մի՛ վախենար, Սաթիկ, նրանք չեն համարձակվիլ մեզ մոտենալ,— հանգստացնում էր կինը, շոյելով իր հագուստի ծալքերի մեջ թաքնված սևահեր գլխիկը:

Հայտնվեց, որ աղջիկը վախեցել է թուրք մրգավաճառներից, որոնք իրանց կեղտոտ նավակներով, գիշակերների պես շրջապատել էին շոգենավը: Կինը փոքրիկի մայրն էր, Տրապիզոնի Արաբյան հարուստ գերդաստանից, որ բախտի բերմամբ ազատվել էր թուրքի յաթաղանից: Բայց Սաթիկը տեսել էր շատ արյունոտ տեսարաններ և այժմ սարսափում էր ամեն մի կարմիր ֆեսից:

— Անիծվի՛ք դուք, անիծվի՛ք,— կրկնեց մայրը մի քանի անգամ արտասվալի ձայնով և, բռնելով փոքրիկի թևը: Հեռացրեց նրան տախտակամածից:

Սև մտքերը պաշարերին ինձ: Ոչ այնքան անցյալի, որքան ապագայի վերաբերմամբ. քանի՛-քանի հազարավոր և տասնյակ հազարավոր հայ փոքրիկներ կրում են իրանց մատաղ սրտերում այդ սարսափը կարմիր ֆեսից, ոճիրների այդ սիմվոլից:

Կարմիր ֆեսերը հեռացան, տանելով իրանց վայրենի գոռում-գոչունները և փոխադարձ զագրելի հայիոյանքները: Շոգենավը շարժվեց, և նրա սուր կտուցը սկսեց կտրել ծովի հարթ մակերեսը, աչ ու ձախ շարտելով ճերմակ կոհակներ:

Ես շարունակ կանգնած էի տախտակամածի վրա և, դիտելով ափերի կանաչազարդ բլուրներ ձորերը և կինոմոնագույն լեռն ժայռերը, մտքով թափառում էի դժոխային երկրի խորքերում: Եվ ոչինչ չէի տեսնում այնտեղ, բացի ավերից ու կոտորածից, արյունաներկ դաշտերից, գետերից, փողոցներից ու այրված ամայի տներից:

Երկրորդ կարգի տախտակամածից սանդուղքով բարձրացավ մի պարսկահայ և արտասվալի ձայնով պատմեց իր կողոպտվելը Բաթումի մեջ: Ուղևորվելու նախընթաց օրը պանդոկ են խուժում մի խումբ սրիկաներ ոստիկանների համազգեստով ու սվիններով և խուզարկելու պատրվակով խլում են ամեն ինչ, որ ուներ:

— Մոռացե՛ք, բարեկամս, մոռացե՛ք,— մխիթարում էր հային մի հրեա, որ նրա հետ բարձրացել էր նույն սանդուղքով,— այժմ ո՞ր ազնիվ մարդը չի կողոպտվում: Այնպես չէ՞, պարոն,— դարձավ նա ինձ, իր փոքրիկ և աշնանային տերևի գույն ունեցող աչքերի աղյուսագույն կոպերը արագ փակելով ու բանալով,— այժմ կողոպտվելը նույնքան սովորական երևույթ է, որքան շուտ հարստանալը:

Եվ անմիջապես պատմեց, թե ինչպես ինքը մի քանի ամսում վաստակել է մի միլիոն ոսկի, ավելացնելով, որ եթե այսօր կողոպտվի, վաղը նորեն կվաստակի: Եվ հազալով, ծիծաղեց խռպոտ ձայնով ու փռշտաց:

— Սեսիլիա, Սեսիլիա, ես քեզ եմ փնտրում,— ընդհատեց նա հանկարծ իր խոսքը, վագելով մի տիկնոջ մոտ, որ այդ պահին հեռվում գրույց էր անում մի իտալացի սպայի հետ:

Սեսիլիա կոչվածը մի բավական սիրուն էակ էր, սաթի պես աչքերով ու մազերով և սաստիկ վավաշոտ շրթունքներով:

Դեղնագույն աչքերով և կեղտոտ հագնված հրեայի կողակիցն էր: Իսրայելի միլիոնատեր զավակն իր քնքուշ ամուսնուն տեղավորել էր առաջին կլասում, ինքը ճամփորդում էր երրորդով: Ի սեր այն զագրելի ախտի, որ կոչվում է խնայողություն և որ աղքատ հոգիների անողոք բռնակալն է: Բայց հրեան ուներ իր նման մի հայ բարեկամ նույնքան ստրուկ բռնակալին: Այս մեկն իր հետ տանում էր գույնզգույն ու կեղտոտ թաշկինակի մեջ կես միլիոն ֆրանկի թղթադրամ, որ հանձնել էր պահել ու պահպանելու համար առաջին կլասի, մի ճամփորդի և ինքը ճամփորդում էր երրորդով:

Երրորդ առավոտյան ես զարթնեցի սովորականից կանուխ:

Բոսֆորը տակավին հեռու էր, իսկ ես՝ անհամբեր: Եղանակը մռայլ էր, մաղում էր մանր անձրև, Մոխրագույն երկինքը, որ երեկ այնպես զվարթ ժպտում էր, այժմ նայում էր ծովին սպառնալի: Իսկ ծովն անդորր էր և չէր վախենում:

Իցիկիս հարևանը մի շատախոս իտալացի էր, որովհետև համայն աշխարհում ընդունված է, որ մի ազգի քաղաքական սայլը տիղմի մեջ խրվելիս նրա զավակներն անպատճառ հայիոյեն Անգլիային, հարևանս այդ պարտականությունը կատարում էր ամենայն եռանդով և իր ցեղին հատուկ ավյունով:

Կեսօրին դեմ մոտեցանք Բոսֆորի սկզբին: Շոգենավը կանգ առավ մի փոքրիկ ծովածոցի բերնում: Երրորդ կարգի ճամփորդներին ոչխարների հոտի պես թափելով նավակների վրա, քշեցին, տարան ախտահանության կայարանը: Ժլատ հայը քիչ էր մնում կատաղությունից պայթե, որ ստիպված էր առժամանակ հեռանալ իր մեծարժեք թաշկինակից: Միլիոնատեր հրեան վարից վեր տխուր ժպտում էր իր քնքուշ Սեսիլիային, որ անհող սեթևեթում էր երիտասարդ իտալացու հետ, մերթ ընդ մերթ լոռնետի ծայրով քնքշորեն շոշափելով նրա գեղեցիկ քիթը, կարծես, համոզվելու համար, որ նա արվեստական չէ:

— Այդ կեղտոտ խուժանի պատճառով երկու ժամ պիտի սպասենք այստեղ,— լսեցի ռուսերեն լեզվով մի բարձր ձայն:

Ետ նայեցի: Ամբարտավան հայ զույգն էր: Նա զուգվել ու զարդարվել էր ամբողջ շուքով Պոլիս մտնելու համար:

Շոգենավը, վերջապես, շարժվեց: Մի քանի րոպե ևս, և ահա մենք տիեզերահոջակ նեղուցի մեջ ենք:

Բարեբախտաբար անձրևը դադարել էր, եղանակը պարզվել: Բամբակի պես ճերմակ ամպերը սահում էին կապույտ երկնքի վրա խուռն երամներով: Կարծես, շտապելով հասնել մի որոշ տեղ, աշխատում էին իրարու առաջել: Դա մի հանդիսավոր թափոր էր, որ ուղեկցում էր մեզ օձապտույտ նեղուցի երկայնությամբ:

Տեսարանն աջ ու ձախ մոգական էր: Սալոնից լսվում էին դաշնամուրի թախծալի հնչյունները: Զգիտեմ՝ ո՞վ նվագում էր Լիստի մի ռապսոդիան: Եվ այդ անտառագարդ բլուրները, այդ թավապատ ձորերն ու խորշերը, այդ մեկը մյուսից կոկիկ վիլաները

իրանց գեղեցիկ աշտարակներով ու քմահաճ լուսամուտներով ու ցցուն պատշգամբներով շոյում էին տեսանելիքը, որպես գերերկրային տեսիլք:

Բայց, ավաղ, ես հայ էի: Իսկ ո՞ր հայը արտասովոր չափ չի հուզվում Կ. Պոլսին մոտենալիս: Որի՞ աչքերի առջև չեն պատկերանում իր ցեղի դարավոր տառապանքները մեկը մյուսի հետևից, հաջորդաբար: Սիբարիտ փաշաների այդ ամառային ապարանքները, որ այնպես մրցում են իրարու հետ, քանի՜-քանի ոճիրներ են տեսել: Գոռոզ դեսպանների այդ եվրոպական վիլլաները քանի՜-քանի անգամ են եղել մեծամեծ եղեռների լուռ վկաներ: Իսկ այդ նենգ գեղեցկուհին, որ Բոսֆոր է կոչվում, զուր չէ գալարվում վիշապի պես: Իր վճիտ ջրերի տակ քանի՜-քանի անմեղների դիակներ է պահում:

Ճակատագրի կծու հեգնանք. հին աշխարհի գեղեցկագույն մասն ընկել է այն ցեղի ձեռքը, որ բնավ ընդունակ չէ գեղեցիկն զգալու: Ասում են մարդը բնության գավակն է և նրա պատճենը. հապա ինչո՞ւ այստեղ նա չի նմանվում իր ծնողին, ինչո՞ւ բնությունն այստեղ այնքան սիրուն է և մարդու հոգին այնքան տոգել:

Քանի մոտենում էինք Կ. Պոլսին, այնքան տեսարանն ավելի ու ավելի ընդարձակվում էր և այնքան իմ սիրտը ճնշվում: Ահա և տիեզերքի մեծագույն չարագործի արյունոտ ապարանքը՝ Իլդիզ-Քյոշքը, անարգ Դոլմա-Բախչեն, Չիրաղանն՝ իր այրված դռների ու լուսամուտների սև խորշերովդ հեռավոր Սթամբուլն իր սրածայր միևարեններով, սքանչելի մզկիթներով: Վերջապես, ահա Բյուզանդիոնի թագուհին— Այա Սոֆիան իր ոսկեգոծ գմբեթով:

Շոգենավը դանդաղորեն մոտեցավ քաղաքին և կանգ առավ:

Անմիջապես տախտակամածը լցվեց դիմավորողներով: Գոռում-գոչուններ և Արևելքում անխուսափելի հայիոյանքներ ու սպառնալիքներ մի տասնյակ լեզուներով:

Վայրկենաբար մեր ճամփարկուները չքացան: Աղջիկս հագիվ կարողացավ խառն ամբոխի մեջ գտնել չքացնողիս Դույն, բեռնակիր էր: Ուժից վեր բեռնն տակ տնքալով, չէր մոռանում աջ ու ձախ արձակել տաճկերեն լեզվով հիշացներ: Կառք չգտանք, կամ ճիշտն ասած, բեռնակից չկամեցավ, որ՝ գտնենք: Չգուշացնելով գրպանահատներից, նա մեզ առաջնորդեց դեպի ֆուռիկյոր. մի ստորերկրյա գիծ, որ քարափը կապում է Ղալաթիայի հետ: Օրվա այն միջոցին էր, երբ առանձին ջանք է հարկավոր այդ գծի վրա տեղ գտնելու համար: Մեզ հաջողվեց գտնել բավական հրիրվելուց և տրորվելուց հետո:

— Թոքաթյան,— հրամայեցի բեռնակրիս:

— Այնտեղ ազատ սենյակ չեք գտնի,— ասաց նա,— ես ձեզ կառաջնորդեմ մի շատ լավ տեղ:

«Շատ լավ տեղը» դուրս եկավ մի կեղտոտ ու մութ պանդոկ երրորդ կարգի: Ուշ երեկո էր. ստիպված էինք գիշերել: Բայց ի՞նչ գիշեր, մինչև լույս չկարողացաքնել հատակի և առաստաղի մեջ արշավող մկների ծվլոցներից և, որ ավելի անսիրտ էր, հույն տիրուհիների ու սպասուհիների գոռում-գոչուններից: Բոլոր ազգերից հույներն են ավելի բարձրաձայն խոսում: Հաճախ թվում է, թե կռվում են, այն ինչ զրույց են անում միայն:

Հետևյալ օրը գնացի Թոքայթյան, և ինձ տրվեց մի մաքուր ու լուսավոր սենյակ դեպի փողոց:

Կ. ՊՈԼՍՈՒՄ

Ահա մի գեղեցկուհի, որ պիտի նայել հեռվից, եթե չեք կամենում նրա ապականված մարմնի վերքերը տեսնել: Բնությունն ստեղծել է մի անսման շրջանակ, մարդն այդ շրջանակի մեջ դրել է մի այլանդակ ձեռակերտ:

Եթե կամենում եք Բյուզանդիոնի մասին պահել մի անուշ երագ, մի՛ իջնեք նավից, նայեցե՛ք հեռվից և հեռացե՛ք: Այլապես պիտի զոջաք: Գեղեցիկ է եղել թե չէ Կ. Պոլիսը հույների ժամանակ, չգիտեմ, բայց այժմ նա ինքն ապականություն է ներսից:

Այս եղավ իմ առաջին տպավորությունը, երբ անցա նրա խորդուբորդերով չի և աղբակույտերով լեցուն պողոտաները, երբ տեսա նրա անոճ և անճաշակ տները, երբ մանավանդ զգացի նրա անտանելի գարշահոտությունը:

Բայց եթե գեղեցիկ չէ Կ. Պոլիսը, շահագրգիռ է հափշտակելու չափ: Ոչ միայն իր պատմական հատուկտուր գանձերով, այլև իր ժամանակակից նկարագրով, իր բազմերանգ ազգաբնակչության բարքովարքերով և ինքնահատուկ գծերով:

Երբ հայ լրագիրներից հայտնվեր իմ Կ. Պոլիս գալը, այլևս ժամանակիս մեծ մասը իմը չէր: Մի քանի պարտավորական այցեր և անթիվ հաճելի այցելուներ, որոնցից շատերի համակրելի կերպարը առմիշտ պիտի մնա իր հիշողության մեջ:

Մի օր, վերջապես, ժամանակ գտա Ստամբուլ գնալու: Հարկավ, առաջին ցանկությունս էր տեսնել սուրբ Սոֆիայի տաճարը: Չհաջողվեց: Դռների առջև ցցված ոստիկանները անցագիր պահանջեցին: Չունեինք, թողել էինք պանդոկում: Հետո իմացանք, որ միևնույն է, անցագրով էլ չպիտի ներս թողնեին մեզ, որովհետև մուտքն արգելված էր հայերի և հույների համար:

Փույթ չէ, օրենքով չլինի, կգտնենք ապօրինի միջոց հռչակավոր տաճարը մտնելու համար:

— Իսկ առայժմ նայենք դրսից և գնանք Ստամբուլի փողոցները թափառելու, — ասացի ես աղջկանս և գնացինք:

Ինձ համար, որ ծնված եմ զուտ արևելյան քաղաքում և տեսել եմ նրա ինքնահատուկ բոլոր պատկերները, Ստամբուլը չէր կարող լինել ապշեցուցիչ, ինչպես եվրոպացու համար: Այդ նեղ ու զառիվեր փողոցները, այդ մութ անցքերը, կեղտոտ քարվանսարանները, գեղեցիկ աղբյուրները և նրանց առջև խմբված ոտաբորիկ աղջիկներն իրանց պղնձյա սափորներով, խանութների գունագեղ փորագրված փեղկերը, ջրկիր էշերը, իրանց փիլիսոփայական դեմքերով, բոժոժներով զարդարված, ուղտերն իրանց վեհապանծ քայլվածքներով և միշտ ու միշտ հեռու նայող երագուն աչքերով թրքուհիները իրանց փակ բերաններով, մերկ սրունքներով, — այս բոլորն այնքան ընտանի էին ինձ, որ կարծում էի, թե վաղուց, շատ վաղուց եմ տեսել Ստամբուլը: Չէ որ իմ ծննդավայրն էլ մի փոքրիկ Ստամբուլ է, գոնե եղել է իմ

մանկության օրերում: Այն տարբերությամբ, որ այնտեղ իշխում է թաթարի սև փափախը, իսկ այստեղ օսմանցու կարմիր ֆեսը:

Ամենից հետաքրքրականն էր ինձ համար թրքուհու տիպարը, որի գեղեցկության մասին առասպելներ էի կարդացել ու լսել:

Գեղեցի՞կ է արդյոք թրքուհին այնպես, ինչպես նկարագրում են նրան եվրոպացի ճամփորդները: Չեմ կարող ասել: Երկու ամսվա ընթացքում ես Կ. Պոլիսի բոլոր արվարձաններում, դիտելով հարյուրավոր թրքուհիներ, ավելի չհիացա նրանց, քան հայուհու, հրեուհու կամ հույնուհու գեղեցկությամբ կամ պակաս տգեղություններ չտեսա, քան այլուր: Պատահում են, հարկավ, էակներ, որոնց երկնագույն կամ ածուխի պես սև աչքերը ընդունակ են մի հայացքով խոցոտել դիտողի սիրտը, բայց ո՞ր չկան այդպիսիները: Նույնիսկ եվրոպական ամենատգեղ ազգի, գլիցերացիների մեջ կարող եք գտնել գեղեցկուհիներ...

Ես կարծում եմ, որ եվրոպացի ճամփորդին մոլորեցնողը թրքուհու դեմքի քողն է և նրա ազգային զգեստը: Հագցրու նրան եվրոպական տարագ, և նա կդառնա մեկը սովորական եվրոպուհիներից ու այնքան չի շլացնի արևելքի ամեն ինչը չափազանցացնող և ամեն ինչը գունավորող եվրոպացի ճամփորդներին, որքան այժմ: Թրքուհու թալիսմանը մուսուլմանական «արգելքի» մեջ է. վերցրեք այդ արգելքը, և նա շատ բան կկորցնե, ինչպես արդեն սկսել է կորցնել այն օրից, երբ ճաշակել է եվրոպական քաղաքակրթության առաջին պտուղները:

Փարիզում և Ղոզմում ես տեսել եմ բավական թվով թրքուհիներ եվրոպական տարագով: Գոնե փողոցներում և թատրոններում նրանք ոչնչով չէին տարբերվում եվրոպուհիներից արտաքուստ և չէին գրավում բացառիկ ուշադրություն: Բայց բավական էր, որ մարդիկ, գիտնային, թե թրքուհիներ են. և արդեն նրանց երևակայությունը բորբոքվում էր և ստեղծում չեղած գեղեցկություններ: Այնքա՛ն մեծ է սնոբիզմի ուժը:

Մի բան ինձ համար անակնկալ էր— ամոթխածության չքացումը թրքուհու մեջ երբ նա հանդիպում է քրիստոնյա տղամարդի:

Թրքուհու երեսը միշտ վարագուրված է ճերմակ ծակոտիկ քողով իր կրոնակցի առջև և հաճախ բաց՝ քրիստոնյա այրերի համար: Երբ թրքուհին ապահով է, որ ոչ մոտիկից ու հեռվից մուսուլմանի խանդոտ աչքը չի լրտեսում իրան, անմիջապես քողն ընկնում է փողոցում նրա երեսից և նրա տարփելի կրծքի վրա իրարուց բաժանվում են սև «չարսավի» եգրերը, իբր թե պատահաբար: Այն ժամանակ քրիստոնյա այրը կարող է, որքան կամենում է, հիանալ նրա մեղամաղձոտ ու թավշամորթ դեմքով, որը մեծ մասամբ գունատ է, և նրա երկայն իրանով, որ չի ներդաշնակում նրա կարճ ոտներին: Եվ թող նայողը վստահ լինի, որ հաճախ կարժանանա նրա սեղմ շրթունքների խրախուսիչ ժպտին ու նրա որոնող աչքերի հրահրող խաղին:

Պոլսահայերն այս համարձակությունը բացատրում են յուրովի: Ասում են, իբր թե թրքուհին քրիստոնյա տղամարդուն մարդու տեղ չի դնում, արհամարհում է: Բայց եթե մի կողմ դնենք թրքամուկ Լոտիի պարծենկոտ ու հնարամիտ արկածներն իսկ, այդ բացատրությունն ինձ թվում է բռնազբոսիկ: Ես կարծում եմ, որ թուրք կինը հետաքրքրվում է քրիստոնյա տղամարդով ոչ պակաս, քան թուրք տղամարդը քրիստոնյա կնոջով: Չէ որ արգելված պտուղը գայթակղեցուցիչ էլ լինի կա խնձոր թե դեղձ, և չէ՞ որ թրքուհին էլ Եվայի դուստրն է: Վերջապես նա իր ամուսնու համար միակը չէ...

ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Կ. Պոլիս մտնելու հաջորդ օրից հաճույք ունեցա ինձ շրջապատված տեսնելու մի շարք համակրելի երիտասարդներով:

Մի մասը թատերասերներ էին, ունեին մի դրամատիկական ընկերություն և կանոնավոր դերասանական խումբ, որոնք քաղաքակրթության տեսակետից գուցե անհամեմատ ավելի մեծ գործ էին կատարում, քան մեր անթիվ «քաղաքական» գործիչները:

Խմբի մեջ կային մի քանի անվիճելի ծիրքեր:

Դրամատիկ ընկերությունը, որի ղեկավարների, թվումս էր և «Կավոռ» զավեշտաթերթի խմբագիր սրամիտ և մի քիչ սատանա թուլայանը, իմ ներկայությամբ Կ. Պոլսում, և նրա շրջակայքում խաղաց իմ պիեսներից մի քանիսը «ի պատիվ հեղինակի»: Այդ ներկայացումներն ինձ պատեհություն տվեցին շփվելու Կ. Պոլսի հայության հետ և հուզմունքով վայելելու նրա հարգանքի այնքան խանդավառ ցույցերը: Ցույցեր, որոնց ես ամբողջովին վերագրում եմ պոլսահայերի ջերմ սիրուն դեպի մայրենի գրականությունն ու թատրոնը:

Տեղն է ասելու, թե այդ ներկայացումներին ես կրկնակի համոզվեցի, որ արևմտահայերի և արևելահայերի համագգային համերաշխության ամենաամուր շաղափը կարող են լինել գրականությունն ու թատրոնը, այսինքն՝ մայրենի լեզուն: Քաղաքականության հողը չափազանց լարծուն է: Համենայն դեպս մեր այժմյան քաղաքագետների ու ղեկավարների մանկական ոտները շատ թույլ են այդ հողի վրա հաստատուն կանգնելու համար:

Թատերասերներին կից իմ բարեկամներն էին երիտասարդ գրողները: Հիշում եմ և երբեք չպիտի մոռանամ Վ. Յարճանյանին, որի ոտանավորները նույնքան զորեղ թվացին ինձ, որքան և իր ողբացյալ եղբոր Սիամանթոյի երկերը: Ոչ պակաս հաճելի է ինձ համար մտաբերել իրավաբան Բախտիարի բովանդակալի գրույցները, կատակները և հետաքրքրական տեղեկությունները թուրքերի կյանքից:

Բայց այդ բոլորի հետ միասին ինձ համար վշտալի էր չգտնել Գրիգոր Չոիրապին, Սիամանթոյին, Վարուժանին, Ռուբեն Չարդարյանին... Դառն էր տեսնել նրանց տեղերը թափուր և չգիտնալ իսկ, թե որտեղ են նեխվել նրանց հոշոտված մարմինները...

Իմ թափառող ու որոնող հոգու համար մի սփոփանք էր տեսնել մեր տաղանդավոր երգիծաբանին, որի անվան անմահացման համար բավական է միայն «Ծապվարը»:

Պատահեցի ես Երվանդ Օտյանին առաջին անգամ Թոքթաթլիի ճաշարանում ճիշտ այն երանելի վիճակում, որ միակ հաճելին է իր համար: Առանց գիտնալու ով լինելը, զգացի, որ սովորական մահկանացուներից չէ: Տաղանդները փոքրիկ արեգակներ են, որ ունին իրանց ճառագայթները: Միջահասակ, նրբակազմ, սակավ ինչ կորամեջք (արդյոք մտքերի ծանրությունից), հստակ սափրած երեսով ու շրթունքներով, խորաթափանց ու ժպտուն աչքերով — ահա Օտյանը: Ի՛նչ մեղմ և ծաղկոծող, բարի և սուր, ի՛նչ մարդասեր և մարդագետ նայվածք: Եվ ի՛նչ թավշյա անուշ բարիտուն:

Ես ոգելից ըմպելիքների թշնամիներից չեմ, ինչո՞ւ մեղքս թաքցնեմ, բայց երբեք ոչ մի բաժակ այն հաճույքով չեմ պարպել, որով պարպեցի Օտյանի ինձ առաջարկած առաջին բաժակն անգլիական «ուսկիի»: Եվ այդ օրից ես դարձա նրա ամենօրյա բաժակակիցը: Ճշմարիտ է, շատ անգամ Օտյանը սրճարան գալիս էր արդեն «պատրաստ», բայց ես էլ չէի զլանում շուտով պատրաստվել, թեև երբեք չէի կարողանում հասնել նրա աստիճանին: Եվ մենք, գլուխներս տաքացրած, ժամերով խոսում էինք, երբեմն մինչև ուշ գիշեր: Նա պատմում էր տաժանակիր աքսորում կրած իր տառապանքները, ես պատմում էի Կովկասի կյանքից: Բայց մեր զրույցները գլխավորապես գրականության ու արվեստների շուրջն էին պտտվում: Սիրում էի նրա սրամիտ դիտողությունները գեղեցիկի մասին, նրա կարկառուն մտքի անակնկալ թռիչքները: Եվ այսօր դժվարանում եմ հիշել ամբողջ հայության մեջ գրչի մի ուրիշ մարդ, որ ունենար Օտյանի չափ նուրբ ըմբռնողություն գեղեցիկ գրականության և գեղեցիկ արվեստի մասին:

Երվանդ Օտյանը մի գրող է եվրոպական իմաստով, որի արժեքը տակավին չի գնահատվել հայության կողմից: Եվ ինձ համար ցավալի էր տեսնել, որ մեր միակ երգիծաբանը իր օրվա պարենը վաստակելու համար ստիպված էր իր ամբողջ ժամանակը նվիրել լրագիրներին:

Լրագիրը խոշոր մտքի ուտիճն է:

Ցավում եմ, որ միայն մի անգամ պատեհություն ունեցա տեսնելու թրքահայ գրականության մի ուրիշ ներկայացուցչին՝ բանաստեղծ Վահան Թեքեյանին, այն էլ շատ կարճ միջոցով: Չունեցա առիթ և ոչ մի վայրկյան հետև ընկերաբար խոսելու, որովհետև ստիպված էի պաշտոնական քող պահել երեսիս վրա ի պատիվ ինձ տրված թեյասեղանին՝ Հայկական Ակումբում մի պատկառելի և զուսպ ընկերության մեջ: Այնտեղ էր, որ հանդիպեցի Թեքեյանին:

Տեսա Սուրեն Պարթևյանին, որ թուրքահայ անվանի գրողներից մեկն էր: Նա տվեց ինձ կարդալու իր նոր գրած երկու թատերական երկերը, որ պիտի խաղացվեին: Կար մի ծանր միտք, որ այդ մարդուն հալածում էր, դարձնելով նրան լռակյաց և մտախոհ: Նա թափառում էր քաղաքից քաղաք իր սրտի ընտրյալի հետ, ինչպես բնից արտաքսված թռչուն: Եվ ոչ մի տեղ հանգիստ չէր գտնում անհանգիստ լեզուների բամբասանքներից¹...

Ռուսահայերը մի քիչ թյուր գաղափար ունին Կ. Պոլսի հայության մասին: Տարիների ընթացքում Թիֆլիսի գրողները, սկսած դյուրաբորբոք Գրիգոր Արծրունու «Մշակ»-ից, իրանց ականջներն ընտելացրել են «հոսիոս» ածականին: Իմաստականներն այսօր էլ երբեմն կրկնում են այդ բառն առանց խղճի խայթի:

Եթե «հոսիոս» նշանակում է թեթևամիտ, հապա ես ի սեր ազգիս կփափագեի Թիֆլիսի և Բաքվի հայությունը տեսնել այնքան թեթևամիտ, որքան Կ. Պոլսի հայությունը: Արդյո՞ք պոլսահայը հոսիոս է այն պատճառով, որ իր մայրենի լեզուն խոսում է այնքան մաքուր, այնքան գեղեցիկ, գիտենալով միաժամանակ մեկից ավելի եվրոպական լեզուներ: Իսկ ռուսահայը խելամիտ է և ծանրաբարո է, որովհետև չգիտենալով իր, մայրենի լեզուն, չգիտե հաճախ նաև ոչ մի օտար լեզու կանոնավոր:

Հասարակական վայրերում ընկերական շրջաններում, թատրոններում և ընտանիքներում պոլսահայը գիտե իրան պահել ավելի վայելուչ, քան ռուսահայը: Նա զուսպ է, շրջահայաց գիտե կշռել իր յուրաքանչյուր խոսքն ու այնպես արտասանել: Նա մոլար չէ և չգիտե շփոթվել: Չվարթ չէ ռուսահայի չափ, բայց կիրթ է ավելի: Այն, ինչ որ

¹ Այս տողերը գրած էի, երբ լրագիրներում կարդացի Սուրեն Պարթևյանի մահվան լուրը: Ցավալի կորուստ մի շնորհալի հրապարակախոսի և ավելի շնորհալի հռետորի: Շիրվ.:

ռուսահայն անվանում է պարզություն, պոլսիայի հայացքով կոպտություն է: Եթե լավ դիտենք, կտեսնենք, որ այս տեսակետից շատ դեպքերում պոլսահայն իրավացի է: Արդարև ռուսահայը հաճախ պարզության կամ անկեղծության քողի տակ մի կոշտ խոսքով վիրավորում է իր բարեկամի սիրտն ու թունավորում նրա օրը: Եվ կարծում է, թե հավիտենական ճշմարտության գանձարանի մեջ մի անգին գոհար ձգեց:

Ռուսահայի համար շողոքորթություն է, երբ պոլսահայը իրան դիմավորում է ժպիտն երեսին և կոմպլիմանը շրթունքերի վրա: Նա չգիտե, որ այդ ժպիտն ու այդ կոմպլիմանը որոշ քաղաքակրթության շողեր են: Բայց միևնույն ժամանակ նա զմայլվում է ֆրանսիացու քաղաքավարությամբ, երբ սա ամեն քայլափոխում արտասանում է իր ավանդական «pardon»-ը կամ «je vous en prie»-ն:

Ճշմարիտ է պոլսահայը ընկերական հարաբերությունների մեջ զուսպ է, գաղտնապահ: Նա իր խոսակցին շուտ չի բանում իր սիրտը և զգուշանում է անմիջական վստահություն արտահայտելուց: Նուրբ կամ վտանգավոր խնդիրների մասին խոսակցելիս՝ նա հանկարծ լռում է և իր հայացքը սևեռում պատերին կամ առաստաղին: Նա թողնում է, որ դուք գուշակեք նրա միտքը, եթե կարող եք: Ճշմարիտ է, հաճախ պոլսեցու դեմքը սքողվում է Սֆինքսի խորհրդավորությամբ, երբ այդ բոլորովին ավելորդ է և երբեմն ծիծաղելի: Ճիշտ է, դուք շատ անգամ դժվարանում եք գուշակել՝ կատա՞կ է անում պոլսահայը, թե՞ լուրջ է խոսում, ծաղրո՞ւմ է ձեզ իր մտքում, թե՞ հարգում:

Այդ բոլորը ռուսահային շփոթեցնում է և կասկածներ հարուցանում նրա մեջ: Բայց ամեն ինչ հասկանալի է դառնում, երբ հիշում եք այն սոսկալի պայմանները, որոնց մեջ պոլսահայը ծնվել է ու ապրել: Վերջապես, ինչո՞ւ պիտի կարծել, թե ռուսահայի պարկեշտախոսությունը միշտ էլ խելացի է կամ հաճելի:

Պնդում են, թե պոլսահայը շահամոլ է: Ահա մի մոլորություն, որ պետք է հալածել, ինչպես և պետք է միանգամ առմիշտ դեն գցել ռուսահայի բառարանից «հոսիոս» բառը: Շահամոլությունը ազգերի կամ քաղաքների արտոնությունը չէ: Շահամոլ կամ ոչ շահամոլ են անհատներ:

...Ժլա՞տ է արդյոք պոլսահայը բարի գործերի համար, ինչպես սովոր են կրկնել ռուսահայերը: Ոչ, կամ նույնչափ, որչափ բոլոր հայ մարդիկ բոլոր երկրների: Ո՞վ է պահպանում Ազգային հսկայական հիվանդանոցը, Կենտրոնական Վարժարանը, միջնակարգ ու տարրական դպրոցները, բազմաթիվ որբանոցները, տասնյակ ընկերությունները, լրագիրները և այլն և այլն:

Այո, պոլսահայը չունի ռուսահայի թափը ազգային հանգանակությունների մեջ, բայց նա չի ունեցել և նրա միջոցները: Չի ունեցել ոչ նավթային շատրվաններ, ոչ պղնձի հանքեր, ոչ հսկայական կալվածներ ու անտառներ: Չի ունեցել արագ հարստանալու ոչ մի միջոց: Նա իր համեստ հարստությունը վաստակել է փարա-փարա, մրցելով գերմանացիների, անգլիացիների, հույների և հրեաների պես վագրերի հետ: Ահա ինչու այսօր վաճառականության մեջ նա բյուր անգամ ավելի ճարպիկ է, քան ռուսահայը, և ոչ պակաս բարեգործ, քան նա, և ոչ ավելի ժլատ, քան նա:

ՊՈԼՍՈՒՅԻՆ

Բախտն ինձ վիճակել էր Կ. Պոլսում ավելի հաճախ շփվել կանանց շրջանների հետ, քան կարող էի ենթադրել:

Ժամանումիս երկրորդ թե երրորդ օրը պատիվ և հաճույք ունեցա ընդունելու հայ Կանանց Նորակազմ Լիգայի նախագահուհիին իր օգնականուհու հետ: Կարծում եմ համեստության դեմ մեղանշած չեմ լինիլ, եթե երկուսի էլ անունները գրեմ: Տիկին Անայիս (Ավետիսյան) և տիկին Պահարի,— երկու նրբամիտ հայուհիներ, երկուսն էլ բանաստեղծ:

— Եկել ենք մեր հարգանքները ձեզ մատուցանելու և խնդրելու, որ առաջիկա կիրակի ձեր ներկայությամբ պատվեք մեր կոնֆերանսը,— ասաց տիկին Անայիսը:

— Հաճույքով, բայց ինչի՞ մասին է ձեր կոնֆերանսը,— հարցրի ես, — եթե քաղաքական խնդիրների, հապա ներեցեք...

— Զավ լիցի,— աճապարեց ընդմիջել տիկին Պահարին, հեզնորեն ժպտալով: — Մեր Լիգայի միակ նպատակն է հայ կնոջ մտավոր զարգացումը և բարոյական կրթությունը:

— Միջոցներ՞ը կրթության:

— Գրականություն և արվեստներ:

— Սքանչելի է ձեր նպատակը: Զախջախված դաշնակ է կնոջ մատների համար: Կարծեմ, Աստված Եվային ստեղծելիս ասել է. «Եղիր ինչ կամենաս, նույնիսկ խմբագիր, բայց երբեք քաղաքագետ, եթե չես ուզում Ադամից զրկվել»:

Չեմ երաշխավորում, որ ճիշտ այդ խոսքերն ասացի, բայց նման մի բան էր ասածս:

Ես սիրով ընդունեցի նրանց հրավերը: Գնացի կոնֆերանսին և շատ լավ արի, որ գնացի:

Սիլոդոսի դահլիճը գրեթե լիքն էր պոլսուհիներով: Այդտեղ էր Չավեն Սրբազան պատրիարքը. մի համեստ և համակրելի դեմք, որ ինձ վրա թողեց հաճելի տպավորություն: Բանախոսեց մանկավարժ Ռեթեսու Պերպերյանի որդին, որ իր հերթին նույնպես մանկավարժ է և շարունակում է իր հանգուցյալ հոր գործը:

Որպիսի ուշադրությամբ էին լսում այդ հարյուրավոր էակները բանախոսի տարրական մտքերը ֆեմինիզմի մասին: Դա ծարավ հոգիների մի ծաղկանոց էր, որ բառերի հեղեղը կլանում էր ագահությամբ, որպես մի կենդանարար անձրև... Այդ օրն էր, որ ես հաճույք ունեցա ծանոթանալ բազմթիվ պոլսուհիների հետ և ստանալ մի քանի ընտանեկան հրավերներ: Կարո՞ղ էի մտածել որևէ մերժման մասին, քանի որ այնքան մեծ էր իմ փափագը գեթ մի հեռավոր հայացք ձգելու պոլսահայ կնոջ ներքին աշխարհի վրա:

Ներքին աշխարհի: Դյուրին է ասել և որքա՞ն դժվար թափանցել: Դոստոևսկին ասում է, թե կնոջ հոգու բանալին շողոքորթությունն է: Ես շողոքորթության փոխարեն պիտի ասեի՝ լռությունը: Փակեցեք ձեր բերանն ամուր և լայն բացեք ձեր ականջները, մի՛ վիճաբանեք, մի՛ հերքեք, միայն լսեցեք և կարող եք ապահով լինել, որ հետզհետե կբացվի ձեր առջև կնոջ հոգին:

Սակայն պոլսահայ կնոջ հետ այնքան հաճելի է խոսել, որ չեք կարող լռել: Միևնույն է, գեղեցիկ է նա թե ոչ, երիտասարդ է թե ոչ, նա գիտե անմիջապես բանալ ձեր լեզուն եթե ոչ իր արտաքինով, գեթ իր նրբամիտ խոսքերով, իր հյուրընկալ ժպիտներով, իր փաղաքուշ ձայնով: Վերջապես իր մաքուր, երաժշտական բարբառով: Երբ հյուր եք նրա տանը, ուշադիր է ձեր յուրաքանչյուր խոսքին, շարժմանը, դեմքի արտահայտությանը: Նա մի վայրկյան անգամ թույլ չի տալիս ձեզ ձանձրանալ:

Ֆրանսիական քաղաքակրթության ազդեցությունն է այս, թե՛ մայրական ժառանգությունն պոլսոլիո, որի քաղաքային նիստուկացը դարերի հարատևությունն ունի: Փույթ չէ, որ պոլսոլիո մտավոր զարգացման պաշարն ավելի չէ, քան ռուսահայ կնոջ պաշարը: Փույթ չէ, որ նա պակաս է տեսել օտար թատրոններ և ավելի քիչ ճամփորդել, քան ռուսահայ կինը: Փույթ չէ նաև, որ նա ավելի վատ է նվագում, ավելի վատ է երգում և շատ էլ խստապահանջ է թե՛ մեկի և թե՛ մյուսի վերաբերմամբ:

Այնուամենայնիվ, նրա հետ ավելի հաճելի է զրույց անել, քան ռուսահայ կնոջ հետ: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ պոլսոլիո այնքան անուշ և այնքան երաժշտական արտասանությունը հայ լեզվի՝ շոյում է ձեր լսելիքը, թեև հենց միայն այսքանը մի մեծ հրապույր է, մանավանդ, հայ գրողի համար: Կա և մի ուրիշ բան. պոլսոլին գիտե իր ունեցած փոքրիկ գանձը ծախսել ավելի գեղեցիկ և ավելի արվեստագետորեն:

Պոլսոլին ավելի արտիստ է, քան ուսուցիչ կամ պատգամախոս: Ինչպես դերասանուհի, նա միշտ բեմի վրա է, այսինքն՝ գիտե ոչ միայն խոսել, այլև լսել, իսկ լսելը մի մեծ և հազվագյուտ արժանավորություն է, առհասարակ, կին էակի համար:

Բանաստեղծ է պոլսոլին թե տնտեսագետ, սալոնի զարդ թե խոհանոցի կամ կարուճակի վարպետ, հասարակական գործիչ է թե վարժուհի, հարուստ է թե ոչ, գիտե հարգել դիմացինի ներքին աշխարհը և ամոթխածորեն ու համեստությամբ դիմադրել նրան, եթե համաձայն չէ նրա գաղափարներին: Նա երբեք իր ցուցամատը չի բարձրացնի մանկավարժորեն և ձեզ խրատներ չի կարդա, ինչպես այդ անում է ռուսահայ «ինտելիգենտ» կինը, երբ նա դպրոցի տեսչուհի է կամ «հասարակական գործիչ» և կամ համբերատար լրագիրներին «հոդվածներ» մատակարարող, մանավանդ երբ նրա տարիքն անցել է քառասնից...

Շատ էի լսել պոլսոլիո գեղեցկության մասին գովասանքներ: Բնական է, որ փնտրեի այդ գեղեցկությունը: Մեղքը պոլսոլիոնը չէ, որ ես մի փոքր հիասթափվեցի: Հռչակը ձյունի գունդ է, որքան հեռու է թավալում, այնքան մեծանում է: Ե՞րբ է իրականությունը վավերացրել երևակայության թռիչքը: Նյու-Յորքի «երկինք քերողներն» ինձ այնքան բարձր չերևցան, որքան լսել էի ու երևակայել: Երկրագնդի վրա գուցե միայն Նիագարայի ջրվեժն է, որի հռչակը շատ վար է իր իրական հզորությունից:

Թոքաթյանի սեղանատանը մի օր տեսա երկու գեղանիներ: Հայերեն էին խոսում, հետևաբար հայուհիներ էին: Մեկը սևահեր էր, սևաչա, ժպտուն, կրակոտ, մյուսը՝ խարտյաշ, կապտաչա, ցնորական հուր և լույս: Բայց ըստ երևույթին պոլսոլիներ չէին, այլ ճամփորդներ:

Հրավիրված էի այցելելու հայ կանանց «Կարմիր Խաչի» հիվանդանոցը: Գնացի պտտեցի բոլոր սենյակները: Տեսա մայրական հոգացողություն փախստական թշվառների վերաբերմամբ՝ հայտնի գերդաստանների տիկինների և օրհորդների կողմից: Տեսա տասնյակ երիտասարդ բժիշկների անխոնջ և անվարձ ջանքերն՝ ամոքելու ազգի մեծ թշվառության մի փոքրիկ մասը: Հիացա սենյակների մաքրությամբ, կերակրի առատությամբ և հիվանդների անբիծ ննջակներով:

Հետո հրավիրվեցի թեյասեղանի: Այդտեղ էր, ահա, որ տեսա մի զմայլելի փունջ հայուհիներից: Մի փունջ, որ կարող էր ամենախստապահանջ գեղարվեստական ճաշակը գոհացնել:

Եթե պոլսուհին չունի շամախեցի կնոջ գեղեցկությունն ու դեմքի զմայլելի գույնը և ոչ դարաբաղցի կնոջ կայտառաթյունը, նա նուրբ է գրեթե առաջինին հավասար և երկրորդից ավելի:

Պոլսուհին գիտե հագնվել: Նա բավական ծանոթ է գույների ներդաշնակության օրենքին, գոնե այնչափ, որչափ ռուսահայ հարուստ դասի տիկիները, որոնք ամեն տարի գնում էին (ավա՛ղ, «Էին») Փարիզ իրանց ճաշակը կրթելու համար: Պոլսուհին գիտե և սիգանքով ճեմել, և սեթևեթ ժպտալ, և սիրակեզ հառաչել ու բանաստեղծորեն տխրել, ինչպես վարսավոր ուռնեի: Նա գիտե նաև չափավոր գործածել անգույն ու անուշահոտ յուղերը, նույնիսկ նազելի շարժել հովհարը և նազելի բռնել լոռնետը:

Պոլսուհին բանաստեղծության սիրահարն է: Սիրահար թե՛ կարդալու և թե՛ գրելու, թերևս ավելի գրելու, քան կարդալու:

Չկա ընտանիք, որի սալոնում չտեսնեք մի քանի փառակազմ հատորներ: Եվ ոչ մի սալոնի սեղան, որի վրա չլինի ոտանավորներով լեցուն ալբոմ, երբեմն մեկից ավելի:

Ալբոմը, իհարկե, մի անմեղ զբոսանք է: Նա հիշեցնում է ռոմանտիզմի դարը: Մի զբոսանք, սակայն, որ բավական սուղ նստեց իմ ժամանակին: Հարկավ, ես անկեղծ հաճույքով էի ընդունում ինձ առաջարկված ալբոմները և գրում, ինչ որ կարող էի գրել: Բայց ամեն հաճույք ունի իր լեղին, երբ չափից ավելի ես ճաշակում: Շատ անգամ տատանվում էի ինչ գրել, որովհետև չգիտեի ում համար եմ գրում: Ամեն անգամ սարսափում էի, երբ պանդոկ վերադառնալով գրասեղանիս վրա տեսնում էի մի նոր բլուր ալբոմների, որոնց տերերին ոչ ճանաչում էի և ոչ տեսել էի:

Մի անգամ մի տիկնոջ ալբոմում պիտի պատասխանեի երեք հարցերի. «Ի՞նչ եք սիրում, ի՞նչ եք ատում, ինչի՞ց եք վախենում»:

Աղջիկս անմիջապես գրիչ վերցրեց և երրորդ հարցի դեմ գրեց՝

— Ալբոմից:

Այո, պոլսուհին ռոմանտիկ է և մի փոքր սանտիմենտալ: Ռեալիզմը տակավին արմատներ չի ձգել նրա հոգու մեջ, և այս նրա արժանավորությունն է: Գուցե չսխալվեմ, եթե ասեմ, որ այժմ էլ նրա կատարելատիպը տիկին Սիպլն է: Արդարև, մի եզակի կին, տաղանդավոր գրող լինելուց զատ, մի երագող էակ, որի հետ կարող էի ժամերով խոսել ու վիճաբանել և դարձյալ վշտանալ, որ շուտ բաժանվեցինք: Գոնե ես այդ տպավորությունն ստացա Գընալը կղզում հազիվ մի ժամ հետը գրուցելուց հետո: Այն էլ նշանավոր վիպասանի կյանքի դառը պահին, երբ նա իր անբուժելի հիվանդ ամուսնուն, Հրանտ Ասատուրին, նոր ճամփել էր ազգային հիվանդանոց...

Ընդհանրապես, պոլսուհին վարպետ է ոչ միայն խոսելում, այլև. գրելում: Ինչ ուզում եք ասացեք, բայց ռուսահայերը չունին ոչ Տյուսաբ, ոչ Սիպիլ և ոչ Չապել Եսայան: Կա, այո, մի փայլուն Մարիետա Շահինյան, որի հավասարը չունինք հայ գեղեցիկ սեռի մեջ, բայց նա պատկանում է հայ անվան հռչակին և ոչ հայ գրականությանը: Եվ թող ռուսահայ բանաստեղծուհիները չվշտանան, եթե ասեմ, որ Տիկին Անայիսի ոտանավորներն են ավելի սիրեցի, քան նրանց գործերը: Եթե ոչ գաղափարի խորության, գոնե ոճի գեղեցկության, հանգերի հարստության և համեմատությունների սիրունության տեսակետից:

Հիշե՞մ արդյոք ուրիշ անուններ: Տիկին Պահարիի, տիկ. Չարուհի Գալեմքերյանի, օր, Զալանթարյանի գրիչներն առնական ուժ ունին:

Պոլսուհին բանաստեղծ Է Նույնիսկ սովորական թղթակցությունների մեջ: Տիկ. Մարի Սթամբուլյան, տիկ. Անայիս, տիկ. Պահարի և ուրիշների նամակներ ունիմ քովս, որոնք զմայլելի տողեր են պարունակում:

Ռուսահայ կինը շատ բաներ ունի յուրացնելու պոլսա հայուհուց և ամենից առաջ նրա սերը դեպի մայրենի լեզուն...

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Ես ստիպված էի մերժել շատ առաջարկներ՝ այս ու այնտեղ բանախոսելու, որպեսզի ժամանակ շատ ունենամ թափառելու: Ես եկել էի ոչ ուսուցանելու, այլ ուսանելու համար:

— Եթե հաճիք, ես ձեզ կառաջնորդեմ Այա Սոֆիա, — դարձավ ինձ մի օր մի հայ երիտասարդ, զինվորականի համազգեստով:

...Ես ուրախությամբ ընդունեցի սիրալիր երիտասարդի առաջարկը, և հետևյալ օրն իսկ գնացինք Սթամբուլ:

Տաճարի ներքին դռների առջև թուրք պահապանը մեր ոտներին հազցրեց քրիստոնյա այցելուների տանջանքը — ավանդական բաբուջները:

Մտանք ներս: Սկսվեց մի ծիծաղելի ուսուցում հնամաշ գորգերի վրա: Մեր գլուխների վրա բարձր ու բարձր ոսկեգոծ կամարը որպես աստղազարդ ամառային երկինք մազնիսի ուժով քաշում էր մեր ազահ նայվածքը վեր, իսկ բաբուջները ստիպում էին նայել վար: Ամեն քայլափոխում նրանք սահում էին մեր կոշիկների վրայից կարծես, հրաժարվելու ծառայել քրիստոնեի պիղծ ոտներին: Այնինչ՝ ծնկաչոք աղոթող հավատացյալները, մեր ականա ծիծաղներից սթափվելով, սպառնալի հայացքներ էին ձգում մեզ վրա:

Այնուամենայնիվ, ի՞նչ սքանչելի տպավորություն:

Սուրբ Մարկոսի տաճարը Վենետիկում մանկական խաղալիք Է Այա Սոֆիայի քով: Հարկավ ոչ միայն իր չափերով, այլև գեղեցկությամբ: Ոճը Նույնն Է, տպավորությունը՝ տարբեր: Այնտեղ ներսում ու դրսում ոսկու շռայլությունն Է ձեզ ջլացնում, այստեղ՝ նրա չափավոր և զարմանալի վարպետ գործածությունն Է զմայլեցնում:

Երեք գլխավոր պայմաններ ունի արվեստն իր բոլոր ճյուղերում, — պարզություն, ուժ և չափի զգացում: Երեքն էլ խստիվ պահպանված են Այա Սոֆիայի կառույցի մեջ:

Ինձ համար բյուզանդական ոճը ճարտարապետության մեջ ավելի հաղթական Է, քան գոթականը: Նա հաճելի, Է իր հանճարեղ պայծառությամբ, որովհետև ուրախություն Է ներշնչում: Գոթիկն ինձ գրավում էր իր անհուն ուժով, բայց ճնշում Է իր մռայլությամբ: Այդ բազմաթիվ հսկայական շարիշար սյուները, այդ նեղ ու ձիգ կամարները իրանց մութ խորշերով, այդ մշուշապատ լուսամուտները, այդ կիսախավարն ու խավարը, իրանց երկնային վեհությամբ հանդերձ, սեղմում են իմ սիրտը և տխրությամբ համակում հոգիս:

— Ամեն ինչ վեր, դեպի աստված, — այս Է ներսի իրարու գրկախառնված և իրար վեր հրող գոթական կամարների և դրսի սուր նիզակների պես ցցված աշտարակների խորհուրդը:

— Ամեն ինչ պարզ, լուսահեղ և հեզ,— ասում է բյուզանդական հրաշակերտի կամարն այնքան ընդարձակ, այնքան պայծառ, այնքան ժպտուն իր առատ լույսով և երկնանման տեսքով:

Գորական տաճարի մեջ ես անջատվում եմ կյանքից և գնում մթության մեջ աստծու հետ մեն-մենակ և դեմուդեմ: Այնտեղ ես լսում եմ մահվան երդը և, ճշմարիտ է, հաշտվում եմ նրա հետ, բայց ցավում եմ, որ կյանքը, դուրսը մնալով, ինձ ձգել է խավարի գիրկը:

Այլ է Այա Սոֆիան: Նա իմ հոգին չի մռայլեցնում, իմ սիրտը չի ճնշում: Այնտեղ կյանքն ինձ հետ է: Նա իմ բարեկամն է և հետևում է ինձ: Եվ այնտեղից ես դուրս եմ ելնում պայծառ հոգով և ավելի ուրախ ու զվարթ, քան մտնելուց առաջ:

Պատմությունն ասում է, որ Զուստինիանոս առաջինը, որի հրամանով է վերակառուցված Այա Սոֆիան իր այժմյան տեսքով, առաջին անգամ այնտեղ մտնելով, գոչել է.

— Սողոմոն, ես քեզ հաղթեցի:

Այո, նա հաղթել է «Ունայնություն ունայնությանց» իմաստունին: Նա հաստատել է, որ կյանքը, չնայելով իր դառնություններին է այնուամենայնիվ թանկ է ավելի, քան մահը, նույնիսկ աստծու համար...

Այա Սոֆիան տեսնելուց հետո՝ ի՞նչ միտք ուներ այցելել մյուս մզկիթները: Նրանք արտաքուստ և ներքուստ այնքան նման են իրարու, որ, կարծես, բոլորը միևնույն հետևողությամբ են կառուցած:

Բայց ի՞նչպես դիմանալ Փանոս Թերլեմեզյանի, այդ միշտ ծարավ և միշտ որոնող ու ուսումնասիրող արվեստապետի համառությանը:

— Անպատճառ պետք է տեսնել Էյուրի մզկիթը և Կահիրեյի Ջամին:

— Շատ լավ,— ասացի մի օր և հետևեցի նրան:

Անցանք Ոսկեղջյուրը նավով, հասանք վերջին կայարանը: Սթամբուլի ամենահեռավոր արվարձանումն ենք, հռչակավոր գերեզմանոցների աշխարհում— Էյուրում: Այստեղից է, որ Ոսկեղջյուրը ցույց է տալիս իր ամբողջ հմայքը:

Փողոցները լեցուն են կանաչ, մանավանդ ճերմակ յազմաներով: Նրանք այնքան շատ են, որ կարմիր ֆեսերն անգամ աչքի չեն ընկնում:

Որքա՞ն ծերունիներ, ի՞նչ փառահեղ դեմքեր և ձյունի պես ճերմակ մորուքներ: Կարծես բիրլիական նահապետներին հատկացված մի առանձին աշխարհ է այդ արվարձանը: Պատերի տակ, շեմքերի վրա, դահֆեխանաների ներսում ու դրսում, նստած կամ կկգած, նրանք ծուլորեն ծծում են նարգիլեն խորհրդավոր դեմքերով և մերթ ընդ մերթ դանդաղորեն մոտեցնում իրենց շրթունքներին դահֆեխի մատնոցաչափ գավաթները:

Նայելով այդ պատկառելի դեմքերին և հիշելով դեռ մերձավոր անցյալի դեպքերը, մարդ ակամա մտածում է՝ մի՞թե այդ մարդիկ կարող էին լինել այնպես արյունարբու, որպես նկարագրում են նրանց: Եվ ի՞նչ է այն դիվային ուժը, որ մերթ ընդ մերթ ստիպում է

Նրանց դեն ձգել այդ թմրեցուցիչ նարգիլեն և յաթաղանը վերցնել անմեղ մանուկներին ու անպաշտպան կանանց կոտորելու համար:

Հիշում եմ, մի օր, երբ Իշխանաց կղզում հյուր էի մի հայ ընտանիքում, ճաշից հետո դուրս եկանք պատշգամբ սուրճ խմելու: Անցորդների մեջ իմ ուշադրությունը գրավեց մեկը: Դա մի պատկառելի ծերունի էր՝ բարձրահասակ, պարթև, երկայն ու ծյունի պես ճերմակ մորուսով, վեհ քայլվածքով, գեղեցիկ: Կատարելապես Արքա Լիր:

— Ի՞նչ սքանչելի մարդկային կերպարանք,— գոչեցի ես, հիացած: Ալեգարդ տիկինը դառը ժպտաց և, տխուր հառաչելով, արտասանեց.

— Այո, սքանչելի, բայց այդ ծերունին մի օր պարծենում էր, որ մի անգամ ութ ժամ շարունակ հայեր է կոտորել: Եվ գանգատվում էր, որ ձեռքը հոգնել էր:

Ես ցնցվեցի: Օ՛հ, Սաթայել է հրեշտակապետի կերպարանքով:

Էյուբի մարմարյա մզկիթն ամենանվիրականն է մուսուլմանների համար: Մահամմեդ Հադթոն է շինել տվել նրան ի հիշատակ Մեծ Մարգարեի դրոշակակիր Էյուբի, որ 668 թվին Կ. Պոլսի պաշարման ժամանակ սպանվել է: Այդտեղ է պահվում Մարգարեի սրբազան սուրբ, և այնտեղ են նոր սուլթաններն իրանց գահակալության առաջին օրը գոտևորվում Օտտոմանի թրով: Մի հատուկ նշանակված հոգևորական գիշեր-ցերեկ հսկում է նվիրական իրերը, խուլ ձայնով կարդալով սրբազան Ղուրանը:

Կահիրեի մզկիթը նշանավոր է իր մոզաիկներով: Ամենահինն է բոլոր մզկիթների մեջ: Նա նախկին վանք է, կառուցված երրորդ դարի վերջերում Հուստինիանոսի օրերով: Այդ վանքի մեջ է իր օրերն ավարտել նշանավոր պատմաբան Նիկիֆոր Գրիգորասը:

Փանոս Թերլեմեզյանը հիացմամբ դիտում էր կիսավեր մոզաիկները: Ես շատ էլ չէի բաժանում նրա հիացումը: Ինձ վրա գեղեցիկն ազդում է, երբ նա միացած է ուժի հետ: Նրբությունը, իրավ է, շոյում է իմ տեսանելիքը, բայց չի ցնցում իմ հոգին, չի կլանում իմ երկրորդն ամբողջովին, ինչպես օրինակ երաժշտությունն ու դրաման—արվեստների այդ երկու քույր թագուհիները...

Բարձրացանք բլուրի վրա ցրված գերեզմանոցները, անցանք գերեզմանների անվերջ շարքերի միջով:

Չուր չէ ժողովրդի երևակայությունն ստեղծել այնքան առասպելներ մահմեդական գերեզմանների մասին: Այդ ցից տապանաքարերն անշուշտ սարսափ են ներշնչում գիշերները, ինչպես կանգուն ուրվականներ: Բոլորն ունին մարդկային ձևեր և յուրաքանչյուրն իր գլխոցը՝ ֆես կամ յագմա, նայելով հանգուցյալի դիրքին և աստիճանին: Ոմանք ներկված են, մեծ մասամբ կանաչագույն:

Կանգ առանք բլուրի գլխում, Կ. Պոլիսը, այն ներքուստ այլանդակ, աղտոտ քաղաքը, կերպարանափոխվեց, հազնելով իր կախարդական զգեստը:

Բավական է, այդ տեսարանից չի կարելի կշտանալ: Վերջապես, անոթությունն ավելի զորավոր է, քան գեղեցիկի սերը: Իսկ մենք անոթի ենք:

Իջանք Էյուբ: Ծերունի թուրք խոհարարը աշխույժ պատանու շարժումներով մեզ համար պատրաստեց տկողինի չափ մանր կտորներից մատի չափ շամփուրների վրա խորոված: Ես կերա տասնումեկ շամփուր, Թերլեմեզյանը կերավ տասնութ շամփուր: Ես հալվա չկերա, նա հալվա էլ կերավ: Ահա տարբերությունը նկարիչի և գրողի միջև:

Ի՞նչ սիրալի են թուրքերը, որքա՞ն քաղաքավարի ու որչափ կիրթ իրանց ձևերի ու վայելուչ իրանց խոսքերի մեջ: Մարդ ապշում է տեսնելով այն անդունդը, որ կա թուրքի արտաքինի և ներքինի միջև:

Ահա այդ խաբուսիկ արտաքինն է, որ այնպես կաշառում է եվրոպացուն և այնքան նպաստավոր տպավորություն թողնում նրա վրա թուրք «քաղաքակրթության» մասին: Արևելքի մեջ ամեն ինչ եվրոպացուն թվում է խորհրդավոր և խորիմաստ, նույնչափ ամենաչնչին բաները: Հաճախ նրա երևակայությունն է ստեղծում իմաստ և խորհուրդ՝ իրերը թանձր գունավորելու մի զարմանալի ցանկությամբ: Շատ էի լսել Կ. Պոլսի «պարող» և «գոռոզ» դերվիշների մասին: Ժամանակս ներեց տեսնել միայն պարողներին կամ պտտողներին:

Հետաքրքրվեցի իմանալ՝ կա՞ր արդյոք որևէ խորհուրդ այդ տարօրինակ աղանդի մեջ, բայց ահա տեսարանը, որ կրկնվում է շաբաթը հինգ անգամ Կ. Պոլսի զանազան մասերում: Բեմը մի ընդարձակ սրահ է հայելու պես ու փայլուն հատակով: Ներս են մտնում մեկը մյուսի հետևից մեկուկես տասնյակ աղանդավորներ: Նրանք ոտաբոբիկ են, հագած են կանացի լայն ու ճերմակ շրջագգեստ, վրեն սև ծածկոց և գլուխներին երկայն թաղիքյա գդակներ. բաժանվում են երկու կարգերի և կանգնում են դեմուդեմ: Գալիս է նրանց ավագը նույն ձևով հագնված, միայն կանաչագույն բաճկոնով: Նա հանդիսավոր քայլերով մոտենում է սրահի ծայրում ծալապատիկ նստած «Միհրադ»-ին և արտասանում է մի աղոթք:

Աղոթքին հետևում է ղուրանից մի հատված՝ երգի եղանակով և նվագարանի ներդաշնակությամբ: Հանկարծ լսվում է թմբուկի մի թնդուն: Դա նվագարանապետի նշանն է: Բոլոր դերվիշները, որ այդ ժամանակ նստած են, արագությամբ ոտքի են ելնում, ձեռներն ուժգին զարկելով հատակին, և սկսում են պտտել սրահի շուրջը: Ավագը կանգնում է Միհրաբի քով: Յուրաքանչյուր դերվիշ նրա առջևով անցնելիս գլուխը խոնարհեցնում է ի նշան երկրպագության և, ոտը ոտին զարկելով, երեսը զարշյում է դեպի իրան հետևող դերվիշը: Հետո ամենքը կանգ են առնում իրանց տեղերում մի քանի րոպե և երաժշտություն լսում: Հանկարծ մի շարժումով ձգում են իրանց ուսերի վրայից սև ծածկոցները և սկսում են կանոնավոր պտտել իրանց շուրջը սրահի շուրջը: Նրանց թևեր, տարածված են հորիզոնաձև, մեկը ձեռներից բաց ափը դեպի վեր, ողորմությունն աղերսում, մյուս ափը դեպի վար, իբր թե ողորմություն է տալիս:

Պտույտները գեղեցիկ են, թևերի պահվածքը կանացի, շրջագգեստների սավառնումն օդային: Մարդիկ նմանվում են թևատարած կարապների, ճերմակ ու թեթև: Այդ պտույտները կրկնվում են երեք անգամ, իրարու հաջորդելով կարճատև դադարից հետո: Վերջապես, դերվիշները նստում են հտակի վրա: Մեկը ձգում է նրանց ուսերի վրա սև ծածկոցները: Նրանք ոտքի են ելնում, մոտենում են ավագին և ջերմեռանդորեն համբուրում են նրա աջը:

Տեսարանը տևում է մի ժամ: Ավագն արտասանում է «Մերհարա», դերվիշները միաձայն երեք անգամ կրկնում են «Ամին»:

Ես դուրս եմ գալիս տարակուսած. ի՞նչ է նշանակում այդ բոլորը: Նայում եմ Բեդեկերի ստորուկ անգլուխներին և նրանց սերկևիլագույն դեմքերի վրա կարդում եմ նույն տարակուսանքը:

Կ. ՊՈԼՍԻ ՇՐՋԱԿԱՅԵՈՒՄ

Սկյութարի կռնակի բարձունքներից Կ. Պոլիսը ներկայացնում է մեկն իր կախարդական տեսարաններից:

Շոգենավը Բոսֆորի նեղուցը կտրելիս՝ ճամփորդի ուշադրությունը գրավում է մի փոքրիկ կղզի, վրեն մի տնակ և մի աշտարակ:

«Ղըզ-Գյուլեսի»² է այդ կղզու անունը, թեև եվրոպացիները նրան անվանում են «Լեանդրի աշտարակ»:

Թուրքերը հետևյալ ավանդությունն ունին այդ աշտարակի մասին:

Մի թափառական գնչուհի Սուլթան Մահմեդին գուշակում է, թե նրա աղջիկը Մեհար Շեհիբին մեռնելու է օձի խայթումից: Սուլթանն իր զավակի կյանքը ապահովելու համար շինել է տալիս Ղըզ-Գյուլեսին Բոսֆորի մեջ և այնտեղ է բնակեցնում նրան ապահով, որ ոչ մի սողուն չի կարող անցնել կղզի:

Մեհար Շեհիբի գեղեցկության համբավը հասնում է պարսկական շահի որդուն, որը առանց տեսնելու սիրահարվում է նրա վրա: Իբրև իր սիրո ցույց մի օր նա գեղեցկուհուն ուղարկում է մի փունջ: Ճակատագրի կամքով ծաղիկների մեջ սպրդած է լինում մի թռչնավոր օձ, որ խայթում է Մեհար Շեհիբին: Գալիս է շահի որդին և թույլը ծծելով գեղեցկուհու վերքից՝ փրկում է նրա կյանքը: Երախտագետ սուլթանը շահզադեի անձնավորությունը վարձատրում է, ամուսնացնելով նրան իր աղջկա հետ²:

Կարծում եմ վատ նյութ չէ ժողովրդի ստեղծագործություններից այնքան օգտվող բանաստեղծների համար:

Իմ պիեսներից մեկի ներկայացման հետևյալ օրը Սկյութարում հրավիրված էի այցելելու Հայ Կարմիր Խաչի տեղական ապաստարանը: Այնտեղ տեսա պոլսուհու մայրական խնամքը թշվառների համար: Ընդարձակ և լուսավոր սենյակների իդեալական մաքրությունը, առատ սնունդ, փոքրերի համար դպրոց և ամեն ինչ, որ կարող է ամոքել թշվառությունը:

Սենյակներից մեկում որբերը ճաշի համար բանջարեղեն էին մաքրում: Կառավարչուհին ականջիս շշնջաց.

— Ուշադրություն դարձրեք այն կողմ, ուր պիտի էրթամ:

Եվ մոտեցավ մի խումբ դեռահաս աղջիկների՝ ինչ որ պատվիրելով: Նրանք կանգնած էին պատի տակ քով-քովի, պատժի ենթարկված աշակերտուհիների դիրքում: Բոլորը նիհար էին, բոլորի վաղաժամ թառամած հողագույն դեմքերի վրա երևում էր հուսահատության և ամոթի կնիքը: Ամեն մեկի ուսերի վրա կար մի շալ: Նկատեցի, որ յուրաքանչյուրն աշխատում է նրա ծայրերով թաքցնել իր որովայնը: Մեկը երեսը դարձրեց պատին և հեկեկաց: Պղծված կույսեր էին: Նոր էին բերվել Անատոլիայի խորքերից — Հայ դժոխքի կենտրոնից...

² Այս ավանդությունն ինձ պատմեց մեկն իմ ուղեկիցներից: Հետո ես ստուգեցի և նույնը գտա Պ. Գրիգոր Զիլինգարյանի «Ուղևորության ի Կոստանդինուպոլիս» հետաքրքրական գրքույկի և Մերվտափի «Voyage Orient» ուղեցույցի մեջ, ՇԻՐՎ.:

Կատը-Ջոյը կամ, ինչպես պոլսահայերն են գրում, Գատիը-Գյուղը, Նախկին Քաղկեդոնն է: Հիմնված լինելով Բյուզանդյոնից տասնևյոթ տարի առաջ, Նա ունի պատմական անցյալ, որի բեկորները հազիվազ նշմարվում են այս ու այն տեղ: Այժմ Կատը-Ջոյը չունի առանձին արժեք, բացի իր նորածն տներից և համեմատաբար կանոնավոր փողոցներից: Գեղեցկության տեսակետից Կ. Պոլսի շրջակայքում առաջին տեղը պատկանում է Պրինկիպոյին, որ Իշխանաց ինը կղզիների մայրն է: Նա ամենամեծն է, ամենաբարձրը և ամենից շքեղն իր փարթամ վիլլաներով, պարտեզներով և բարձունքներից երևացող սքանչելի տեսարաններով դեպի ծովն ու ցամաքը:

Այդ կղզու վրա են վայելել իրանց զբոսանքի և անկման ժամերը մեր միջին դարերի բյուզանդական իշխանները: Այժմ նրանց փոխարինում են ռուս պաշտոնյաները, գեներալներն ու սպաները, որոնք իրանց հետ բերել են ցարական շրջանի ամբողջ «քաղաքակրթությունը»:

Եղա և մի քանի ուրիշ կղզիներում, բայց նրանք ինձ վրա պակաս տպավորություն գործեցին: Պրինկիպոն մի գեղեցկուհի մայր է, որի զավակներից ոչ մեկը չունի նրա գեղեցկությունը:

Իմ թափառումների ժամանակ ես աշխատում էի ծովի վրա լինել իրիկնադեմին, երբ արեգակը հրաժեշտ է տալիս ծովին ու ցամաքին: Ով մի անգամ օրվա այդ պահին տեսել է Կ. Պոլիսը ծովի վրայից, չի կարող երբեք մոռանալ տեսարանը:

Կ. Պոլսի գլխավոր հմայքը նրա մզկիթներն են և նրա աժուռ միևարեթները: Թուրքն ամեն բանից զրկել է երկիրը և ոչինչ չի խնայել երկնքի համար, նույնիսկ վերջին կաթիլը խղճի և բանականության: Համեմատեցեք Կ. Պոլսի մզկիթները տների հետ և դուք կապշեք այն տարբերության վրա, որ կա Աստծու տան և մարդու կացարանի միջև:

Մզկիթը հանճարի ստեղծագործությունն է, մի հատիկ պարզևս գեղեցիկին, որով նա կարող է պարծենալ:

Ժամանակը մարդկության մտքից կշնջե բոլորը, ինչ որ արել է օսմանցին իր հինգ դարվա պատմության ընթացքում, կմասն երկու բան՝ Ոճիրը և Մզկիթը. վերջինս որպես Նախատինք անկաշառ Աստծուն, որ թույլ է տալիս իրան այդպես կաշառվելու:

ANDCRA DORIA

Դաշնակիցները Կ. Պոլիսը լեցնելով ցամաքի զորքերով, ավելորդ չէին համարում նրա դեմ կանգնեցնել մի տասնյակ ծովային հրեշներ, որոնք կարող էին մի հարվածով հիմնիվեր ավրել Նախկին Բյուզանդիոնը:

Մեծ դժվարությամբ է թույլ տրվում օտարներին այդ զրահավորների վրա ոտք դնելու: Սակայն չկան դռներ, որ չունենան բանալի: Իտալական ինժեներ Մկրտիչ Բասմաճյանը, մի վերին աստիճանի կիրթ ու սիրալիր երիտասարդ, կա գողացել էր Angrea Doria դրեդնոտի հրամանատարին համոզել, որ Իտալիայի ծովային հզորությանը ոչ մի վտանգ չի սպառնում մի հայ զորոյի և նրա դստեր կողմից: Եվ ահա մի օր Բոսֆորի ափի մոտ մեզ սպասում էր մի կոկիկ շոգեմակույկ՝ չորս մաքուր հագնված նավագներով: Մենք ելանք նրա վրա և տասը թուփե չանցած արդեն տիտանի վրա էինք:

— Դուք այստեղ կտեսնեք գիտության վերջին խոսքը,— ասաց Նավապետի երիտասարդ օգնականը, իր պաշտոնակիցների խմբով դիմավորելով մեզ պողպատյա տախտակամածի վրա:

Եվ գեղեցիկ է Անդրեա-Դորեան, և զարհուրելի գեղեցիկ՝ իր անունով և արտաքին տեսքով, զարհուրելի՝ իր դժոխային ուժով և իր կոչումով:

Հեռվից Անդրեա-Դորեան՝ նմանվում է մի Նազելի կարապի, որ թևերը ծալած հանգչում է ջրի երեսին անշարժ: Նրա պողպատյա կտուցը ցցված է վեր հպարտ: Նրա արծաթափայլ կողերի ու կրծքի վրա ջրի վետ-վետ շողերը բեկբեկվում են բյուրավոր ադամանդների պես:

Իր վեհության մեջ Անդրեա-Դորեան անդորր է, ինչպես ինքնավստահ թագուհին գահի վրա: Իր ուժի գիտակցությամբ նա արհամարհում է ամեն ինչ, որ իր շուրջն է: Եվ ամեն ինչ փոքր ու տգեղ է երևում նրա քով:

Ասում են Անդրեա-Դորեան երկյուղ չունի ծովերից ու օվկիանոսներից: Մորիկներն ու փոթորիկները նրա համար զբոսանք են:

Այժմ նա անշարժ է: Մարմարոցի կատաղի ալիքներն են խաղում նրա հետ: Ուժգին կերպով արշավելով նրա վրա, ետ են մղվում ջարդուփշուր եղած: Եվ զայրանում են, որ չեն կարող մագու չափ երերել այդ տարօրինակ կենդանուն:

Մեկն Անդրեա-Դորեայի հսկա ծխնելույզներից գիշեր-ցերեկ ծուխ ու բոց է ժայթքում, ինչպես Վեգուլի հրաբուխը: Բոցի կայծերը չքանում են օդի մեջ, իսկ ծուխն երկնակամարի վրա ձգում է մի աղեղնաձև ժապավեն:

Մի ամբողջ քաղաք է Անդրեա-Դորեայի ոլովայնը: Այնտեղ հազար ու վեց հարյուր մարդ է բնակվում՝ պատրաստ ամեն վայրկյան ծառայելու մահու Աստծուն: Ոչ մի կին, ոչ մի երեխա, ոչ մի ծերունի: Թույլերն այնտեղ գործ չունին: Ամեն ինչ Նախատեսված է այդ ահագին բազմության համար: Այնտեղ կան ամեն տեսակի արհեստանոցներ: Այնտեղ չկա միայն դագաղի գործարան, վասնզի ծովագնացները, միայն մի դագաղ ունին և մի գերեզման-Ծովը: Բայց այնտեղ կան հիվանդանոց, դեղատուն, գրադարան, տպարան, թատերական բեմ, սալոններ, դաշնամուր, և այլն և այլն: Այս բոլորը ջրի տակ է. Անդրեա-Դորեան միայն կրծքից վեր է ջրի երեսին: Նրա ահռելի մեծությունը աչքով չափելու համար պետք է ներս մտնել: Պետք է անցնել անթիվ անցքեր, որ այդ ծովային քաղաքի փողոցներն են: Դա մի ամբողջ ճամփորդություն է Լաբիրինթոսի մեջ: Մի ճամփորդություն, որ առանց ուղեցույցի անհնարին է կատարել:

Ջրից վեր միայն այս մասերն են, որոնց պաշտոնն է մահ սփռել չորս կողմ: Վարը՝ կյանքը, վերը՝ մահ: Տեսնում եք հեռվից այն կլոր ծակերը, որ զարդարում են տիտանի կղզերը: Նրանց մեջ են տեղավորված մահվան գործիքները: Յուրաքանչյուր ծակից Նայում է մի մի հրեշի կոկորդը Նավթահորի լայնությամբ: Խոշորագույն թնդանոթները տեղավորված են տախտակամածի վրա, իրանց զրահների մեջ: Պողպատյա աշտարակներ են շինված, հատկապես, նրանց սոսկալի բերաններն այս կամ այն կողմ դարձնելու համար: Սակայն մի մանուկ կարող է պտտեցնել այդ աշտարակները, այնքան ճարտարարվեստը դյուրացրել է նրանց պտույտը:

Մեծ թնդանոթների ռումբերն ունին 10—12 տարեկան մանուկների բարձրություն: Ավելի քան քառասուն կիլոմետր են թռչում նրանք: Եվ մաթեմատիկական ճշտությամբ ընկնում են, պայթում այնտեղ, ուր հղել է նրանց՝ մարդու կամքը:

Մի գեղեկ է Անդրեա-Դորիայի մեքենաների բաժինը, սակայն ոչ խավար և ոչ խեղդուկ: Էլեկտրականությունը նրան մատակարարում է և՛ լույս, և՛ օդ: Մաքրությունն իդեալական է. պղինձն ու պողպատը փայլում են ոսկու ու արծաթի փայլով:

— Մենք ենք նավի սիրտը,— ասաց մեքենապետը համեստ ժպիտով,— եթե մենք պայթենք, նա կործանված է:

Ահա, մեքենան նավի սիրտն է, իսկ նրա գլուխը հրամանատարն է: Եվ այդ գլուխն է միայն, որ գործում է կռվի ժամանակ: Նա է մտածում ամենքի փոխարեն և նա է կարգադրում պողպատյա կամրջի այն բարձունքից, ուր տեղավորված է նրա խցիկը:

Մարդիկ լուռ են ինչպես ուրվականներ, երբ սկսվում է ռմբակոծությունը, լույսերն են խոսում ու բանակցում: Յուրաքանչյուր լույս իր գույնն ունի և յուրաքանչյուր գույն՝ իր լեզուն ու իր իմաստը:

Այո, զարհուրելի է Անդրեա-Դորիան, սակայն անհաղթելի չէ: «Սարսափ» անունը կրելով, նա ինքն էլ ունի իր սարսափը: Ահա այն փոքրիկ առարկայից, որի նմանն ունի իր որովայնի մեջ հարյուրավոր:

«Ական» է այդ առարկայի անունը: Նա նույնպես պողպատյա է և ունի ոչ պակաս բարդ կազմվածք, քան ինքը Անդրեա-Դորիան: Դժվար է, գրեթե անհնարին է նրա հետ պայքարելը: Բոլոր միջոցները, որ մինչև այժմ հնարել է գիտությունը, անգոր են այդ փոքրիկ ձկնանման սատանայի դեմ:

Նա միշտ ջրի տակ է, միշտ աննկատելի: Ոչ ոք չգիտեք թե ո՞րտեղ է նա և ո՞րտեղից պետք է հարձակվի: Նա մի կույր օձ է, որ միայն նրան է խայթում, ով դիպչում է իրան:

Սոսկայի է նրա հարվածը և անխուսափելիորեն մահաբեր: Նա ինքը կործանվելով, կործանում է իր թշնամուն: Թող լինի այդ թշնամին օվկիանոսների սարսափը: Հաճախ նա ածելիի սրությամբ կիսում է իր զոհին միջից, ինչպես կայծակ: Այդ դեպքում մի քանի վայրկյանում ծովի հատակ են գնում հազարավոր մարդիկ և տասնյակ միլիոնների հարստություն:

Ես դուրս եկա տարտարոսից անգորացած ու ընկճված, այնքան ազդել էր ինձ վրա այդ դժոխային ծնունդը մարդկային ուղեղի: Ահա ուրեմն, գիտության վերջին խոսքը: Եվ ում համար է արտասանված այդ խոսքը... Այն չար Աստծու, որ առանց գիտության օգնության էլ ամենագորն է բոլոր աստվածների մեջ:

Սալոններից մեկում մենք հյուրասիրվեցինք շամպայնով և անուշեղենով:

Բասմաճյանն իտալերեն թարգմանեց իմ խոսքը, որ արտահայտում էր իմ շնորհակալությունները սիրալիր հյուրընկալներին և իմ հիացումը Իտալիո հանճարին...

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Մի քանի օր ևս, և պետք է հեռանալ. Կ. Պոլսից: Առջևս կա ահագին ճամփորդություն. Աստված գիտե՝ որքան պիտի տևե նա:

Խոստումներ ունիմ, որ պարտավոր եմ կատարել: Նախ մի քանի փոխայցելուններ, ապա... ոչ, այս մեկն ինձ դուր չի գալիս՝ ատենախոսությունը: Ահ, եթե հայ կանանց Լիգայի վարչությունը բարի լիներ վերադարձնելու ինձ իմ անզգույշ խոստումը:

Բայց նա համառում է:

— Չըլլար, պիտի բանախոսեք, մենք արդեն ծանուցել ենք օրաթերթերի մեջ,— կրկնում է եռանդուն նախագահուհին իր սեռին հատուկ կամակորոթյամբ:

— Բայց, տիկին, ես բանախոս չեմ, իմ պերճախոսությունը կարդում է: Վերջապես, դրոշի լեզուն գրիչն է:

— Արեկ, այն ատեն կարդացեք ձեր գործերեն մեկը:

— Լավ: Ես կկարդամ իմ «Արմենուհի» պիեսը: Կլսե՞ք:

— Ուրախությամբ:

Չեմ թաքցներ, ընտրությունս նենգամիտ էր: Ես ուզեցի փորձել, ինչպես պիտի վերաբերվի պոլսուհին իմ խեղճ հերոսուհուն, որ այնպես քարկոծվեր մի քանի լրագրական իմաստականների և մի խումբ փարիսեցիների կողմից: Կարդացի «Արմենուհի»-ն մի ընդարձակ հասարակական դահլիճում, որի անունը մոռացել եմ:

Խոստովանում եմ, եթե այդ օրը գեթ մի հատիկ պարապ աթոռ նկատեի, պիտի վիրավորվեի: Ոչ իմ ինքնասիրության համար, քա՛վ լիցի, այլ Արմենուհու համար: Պետք էր վշտանայի նույնպես, եթե հերոսուհուս հոգեկան տառապանքներն այնպես չհուզեին իր ունկնդիրներին և նրա բուռն բողոքները հայ կնոջ ընտանեկան կիսաստրուկ վիճակի դեմ չարժանանային նրանց հուզմանն ու ծափերին: Այդ օրը ինձ համար եղավ մի նոր ապացույց, որ հայ կինը, ուր ևս լինի, Թիֆլիսում թե Կ. Պոլսում, պարզապես շատ ու շատ բարձր է հայ տղամարդից:

Գնալը կղզում ունեցա մի թեթև անախորժություն: Մի երեկո այնտեղ դերասանական խումբը ներկայացնում էր «Ավերակների վրա» պիեսը: Առաջին թե երկրորդ միջնադարին եկավ թուրք ոստիկանությունը և խաղն արգելեց: Պատճա՞ռը: Իբր թե պիեսը գրաքննիչից թույլտվություն չունի:

Խումբը բողոքեց, հասարակությունը նույնպես: Ոչինչ չօգնեց, նույնիսկ շնորհալի դերասան Նշանյանի ահեղ ձայնի որոտները:

Հասարակությունը լուռ ցրվեց, թողնելով տոմսականների վճարը մի ուրիշ ներկայացման համար:

Հետո մի քանի անձինք թուրք ոստիկանության վարմունքն ինձ բացատրեցին այսպես: Որպես թե մի երկու բարև հայեր նրա ականջին շնչացած են լինում, թե պիեսի բովանդակությունը հակաթրքական է, թե «Ավերակների վրա» վերնագիրը ուրիշ ոչինչ չէ, թե ոչ Հայաստանի ավերակներ և այլն: Ոստիկանությունը հավատում է բարի հայերին: Որքան ճիշտ է այս—չգիտեմ: Գրում եմ այն, ինչ որ ինձ ասացին:

Բայց բավական է, ժամանակ է հեռանալ Կ. Պոլսից: Հոկտեմբերի 29-ին իտալական լավագույն շոգենավերից մեկն Իզմիր է ուղևորվում:

ԴԱՐԴԱՆԵԼԻ ՆԵՂՈՒՑՈՎ

Մեր ուղևորվելու օրը Կ. Պոլիսը մեզ հյուրասիրեց բնության սքանչելի խաղերից մեկով:

«Գալիցիա» շոգենավը խարիսխ էր ձգել ափից հեռու, այնտեղ, ուր Բոսֆորը գրկախառնվում է Մարմարայի հետ:

Ճիշտ այն պահին, երբ նավակ նստեցինք, առավոտից սկսած անձրևը փոխվեց հեղեղի: Մինչև շոգենավին հասնելը նավակը կիսով չափ լցվեց ջրով: Թուրք թիավարները երկինքն անիծեցին, բայց մեզ անվտանգ տեղ հասցրին, հարկավ ոչ ախորժելի վիճակում:

Մինչ ես իմ խցիկում զբաղված էի հագուստ փոխելով, դրսում բնությունը պատրաստում էր մի մոգական տեսիլ:

Երբ ելա տախտակամածի վրա, մնացի ապշած: Հեղեղը դադարել էր, ամպերը չքացել էին, բայց նրանց հետ չքացել էին և Բոսֆորն իր ափերով, և հեռավոր լեռներն ու բլուրները, և մերձավոր Կադը-Զյոյը, Սկյութարը, Կ. Պոլիսը, ամեն ինչ: Մնացել էր միայն մի բան — երկինքը: Մի բաց մանիշակագույն թափանցիկ վրան ոչ միայն մեր վերը, այլև չորս կողմը, վարը: Մեր շոգենավը, որ տեղից չէր շարժվել տակավին, թվում էր օդի մեջ կախված: Ուրիշ նավեր չկային, միայն հեռու, շատ հեռու երևում էին երեք առագաստավոր, սև, ինչպես թևատարած ագռավներ: Երեքն էլ ծովի վրա չէին, այլ երկնքում, որովհետև ծով չկար:

Տպավորությունն այնպես էր, որ ինձ թվում էր, թե մենք երկնքի մեջ ենք: Շոգենավը մեղմիկ օրորվում էր: Ես այնքան ազդվեցի այդ տարօրինակ երևույթից, որ սիրտս սկսեց ուժգին բաբախել: Բայց ուրախ էի, այնքան ուրախ, որ ուզում էր գոռալ աղաղակել: Կարծես նույն վիճակում էին և մյուս ճամփորդները: Ամենքը բերանբաց և անշարժ դիտում էին տեսարանը: Միայն շոգենավի ապաստավորներն ու նավագներին էին անտարբեր:

Աղջիկս իր խցիկում էր: Ուզում էի վազել, դուրս կանչել նրան, բայց տեսարանն ինձ կախարդել ու կաշկանդել էր իր անօրինակ գեղեցկությամբ:

Վերջապես, մանիշակագույն ջղարշն սկսեց հետզհետե նոսրանալ և հանկարծ չքացավ, ինչպես էլեկտրական լույսը: Ծովն անջատվեց երկնքից, և նորեն ամեն ինչ ստացավ իր բնական կերպարանքն ու գույները:

— Միրած էր, — ասացին նավագներն անտարբերությամբ, — մեզ համար նոր երևույթ չէ:

«Գալիցիա»-ն շարժվեց և, քերելով Սթամբուլի, ապա Իշխանաց կղզիների խոնավ ափերը, անցավ Մարմարայի խորքը:

Մնաս բարև, Կ. Պոլիս: Վերադարձին կտեսնվենք, եթե ճակատագիրը կամենա:

Ամբողջ գիշերը չկարողացա քնել: Վայ այն ճամփորդին, որ անախորժ ուղեկիցների հետ է:

Այս անգամ կաբինի հարևաններս էին երկու թոքախտավոր արաբներ, որ գնում էիք, Եգիպտոս բժշկվելու: Մեկը նրանցից շարունակ հագում էր ու մրթմրթում, մյուսն անընդհատ զառանցում էր, մերթ ընդ մերթ գոռալով խոզ ձայնով, որ, կարծես, դատարկ կարասի խորքերից էր գալիս:

Առավոտյան ոտքի ելա կանուխ և առաջինը բարձրացա տախտակամածի վրա:

Մարմարան անցել էինք գիշերով, մոտենում էինք Դարդանեյին: Եղանակը պարզ էր, ծովն անդորր: Անհանգիստ ճայեր սավառնում էին շոգենավի շուրջը և, մերթ ընդ մերթ վար իջնելով, կտցահարում էին ծովի մակերեսը: Ուտելիք էին որոնում իրանց համար:

Մեկը մյուսի հետևից դուրս եկան ճամփորդները, շատերը գինված՝ հեռադիտակներով:

Ծովն սկսեց հետզհետե սեղմվել, ավերը մոտեցան իրարու: Ասիան և Եվրոպան, որ գիշերը բաժանվել էին միմյանցից, նորեն եկան դեմառդեմ:

Ստանք հռչակավոր նեղուցը: Ահա սկսվեցին երևալ ամրոցներն ու զորանոցները: Բոլորն աջ, այսինքն եվրոպական ավերի վրա են: Ձախ ավերի վրա երևում են ինչ-որ կանոնավոր քառակուսի հողաթմբեր: Ասում են, թնդանոթներ կան նրանց մեջ: Զգիտեմ, ոչինչ չեմ տեսնում:

Առհասարակ սկզբում նեղուցն այն տպավորությունն է անում, որ մարդ դժվարանում է հավատալ, թե դա է երկու ծովերի այն դժոխային կոկորդը, որ այնքան մարդկային կյանքեր է կլանել: Ափերը բարձր չեն, հազիվ 10—15 ոտնաչափ վեր ծովի մակերևույթից: Միայն, նեղուցից հեռանալով, նրանք բարձրանում են աստիճանաբար և գոյացնում դարավանդներ ու բլուրներ: Նեղուցի լայնությունն աչքի չափով մոտ մեկուկես կիլոմետր է: Ես ավելի նեղ էի երևակայել Դարդանեյը և բարձր՝ ուղղահայաց ժայռերի մեջ:

Ծովը տակավին ժպտում է ուրախ: Չի երևում մարդկային վերջին Մեծ Ոճիրի հետքը: Կարծես, այդ վճիտ ջրերը չեն, որ ներկվել են կես միլիոն մարդկանց արյունով: Բնությունը քարե տախտակ է, ժամանակը՝ սպունգ, ինչ որ գրվում է մեկի վրա, մյուսը ջնջում է...

Բայց ահա մի խորտակված գրահակիր: Նրա ծխնելույզներն են միայն երևում: Ահա երկրորդը, երրորդը, չորրորդը զանազան դիրքերում: Մեծ չէ նրանց թիվը, բայց մեծ է եղել. պիտանիները դուրս են բերվել, մնացել են անպետքները:

— Զեյնեսպոնտոս, Լեանդր, Զերո,— լսեցի քովս մի ձայն:

Նայեցի: Մի երիտասարդ հույն հետը կանգնած ֆրանսուհուն պատմում էր իր ազգի հարուստ անցյալից մի գեղեցիկ էջ:

Ես լսեցի.

— Ահա այստեղից է երիտասարդ Լեանդրն, ամեն գիշեր ավից ավի լողալով, անցել հեյլեն գեղեցկուհի Զերոյի հետ գրկախառնվելու համար: Մի գիշեր նա, փոթորիկի հանդիպելով, ծովն է սուզվել ու խեղդվել: Զերոն, չկարողանալով տանել իր վիշտը, ձգել է իրեն ծովի մեջ ու նույնպես կործանվել: Այսպես են սիրել մեր նախնիքները: Ահա ճիշտ այստեղ է անգլիացի հանճարեղ բանաստեղծ Բայրոնը ավից ավի լողալով անցել:

Ահա, վերջապես, և հռչակավոր Գալիպոլին իր զորանոցների արյունագույն տանիքներով և ճերմակ պատերով: Ո՞վ կարող է հավատալ, որ այդ փոքրիկ անդորր գյուղաքաղաքը երկու տարի շարունակ համայն մարդկության ուշադրության կենտրոնն է եղել:

Ափերը նորեն բաժանվեցին իրարից: Մտանք Եգեյան Ծովը: Աջ կողմը Հունաստանն է, ձախ կողմը Ասիական Թուրքիան. երկու հավիտենական թշնամիներ, որ ավա՛ղ, երբեք և երբեք չեն կարող հաշտվել...

ԻԶՄԻՐՈՒՄ

Առավոտյան ութ ժամը դեռ չէր լրացել, երբ մեր նավը կանգ առավ Իզմիրի սքանչելի ծովաճոցում:

Իմ երկամյա ճամփորդության ընթացքում քաղաքից քաղաք տեղափոխվելիս, հակառակ սիրալիր հայրենակիցներին հանդիմանություններին, ոչ ոքի չէի գրում կամ հեռագրում իմ ժամանման մասին: Իրավունքիցս դուրս էի համարում բարեսիրտ մարդկանց անհանգստացնել: Այս նրբազգացողությունը կարող էր ինձ կրածներիցս ավելի նեղություններ պատճառել, եթե չլիներ հայ լրագիրների բարի վերաբերմունքը դեպի ինձ: Այս տեսակետից արևմտահայ մամուլն ավելի կիրթ է և ավելի հյուրընկալ, քան ռուսահայ մամուլը:

— Բարի գալու՛ստ,— դիմավորեց մեզ Իզմիրի քարափի վրա մի հայ այն պահին, երբ մենք պատրաստվում էինք կառք նստել,— լրագիրներից գիտեինք, որ պիտի գաք: Ի՞նչ, կա՞ռք: Զավ լիցի: Իզմիրի փողոցները կառքերի համար չեն: Պանդակները երկու քայլի վրա են:

Եվ սիրալիր մարդը, որի անունը դժբախտաբար մոռացել եմ, մեզ առաջնորդեց դեպի պանդակները:

Չինադադարից հետո Իզմիրն անցել է հույների ձեռքը: Չնայած դաշնակից պետությունների զանազան միջամտություններին, փաստորեն նրանք են տերերն ու տիրականները երեք հարյուր հազար բնակչություն ունեցող քաղաքի:

Պատերազմի ընթացքին քրիստոնյա ազգաբնակչությունը, որի մեջ հայերի թիվը մոտ քսան հազար է, կրել է թուրք կառավարության բոլոր բռնությունները: Ճշմարիտ է, մասսային կոտորածներ չեն եղել, բայց անհրավ ձերբակալություններ, հալածանք, արքոր, մասնակի ոճիրներ տեղի ունեցել են: Հայերը շատ դեպքերում իրենց կաշին փրկել են կաշառքով: Իզմիրը Այդնի վիլայեթի գլխավոր քաղաքն է և Կ. Պոլից հետո առաջին առևտրական կենտրոնն է ամբողջ Լևանտի: Խոշոր առևտրական տները մեծ մասամբ եվրոպացիների ձեռքումն են և մասամբ հայերի ու հույների:

Ժամանելուց երկու թե երեք օր անցած՝ Սերովբե Դավթյանի ուղեկցությամբ այցելեցի երկրի խոշորագույն մանուֆակտուրիստին: Տեղն է ասել, որ արևմտահայերն ամենուրեք սովորություն ունին այցելուներ ընդունել իրանց գրասենյակներում կամ խանութներում, եթե օրը կիրակի չէ:

Միհրան Ազնավորյան, — այս անունն ինձ ծանոթ էր դեռ Կովկասում: Գիտեի, որ դա մի շատ կրթասեր և մասնավորապես թատերասեր մարդ է, իսկ Կ. Պոլսում լսել էի, որ այժմ նա խնամում է մեծ թվով որբեր: Մի բան, որ հետո ինքս ստուգեցի, այցելելով նրա հաշվով պահվող ընդարձակ որբանոցը:

Ահագին քարվանսարայի չափ խանութում ինձ սիրալիր դիմավորեց մի տիկին ավելի քան մազերով, բայց շատ երիտասարդ դեմքով և կապտագույն աչքերով:

— Տիկին Ազնավորյան,— ասաց նա, հրավիրելով մեզ մաքուր կահավորված մի ընդարձակ գրասենյակ,— ամուսինս իսկույն կգա: Ինչպես եք, հանգիստ եք, վաղուց էինք սպասում:

Շուտով երևաց և տիկնոջ ամուսինը: Բարձրահասակ մի տղամարդ, երկայն ավելի քան ընչացքով, մաքուր սափրած երեսով, մեկն այն հին սերունդի հուժկու և բարեհամբույր Ատիպերից, որ առաջին իսկ հայացքով գրավում են պատկառանք և համակրանք:

Կես ժամվա մի հատ ու կտոր զրույց այդ փորձական և ժամանակի արժեքն հասկացող մարդու հետ բավական եղավ, որ ես որոշ գաղափար կազմեի երկրի և մասնավորապես հայերի տնտեսական և քաղաքական վիճակի մասին: Նրա յուրաքանչյուր պարզ ու անպաճույճ դարձված ունեի իր որոշ իմաստն ու պատկերը:

Յրաժեշտից առաջ նա ինձ ցույց տվեց իր ահագին ամբարանոցի մի քանի մասերը: Յսկայական սրահները ծայրեծայր լեցուն էին ապրանքներով, և սակայն նա ասաց.

— Տակավին բավարար քանակությամբ ապրանք չունեմ: Ես հեզկորեն ժպտացի. եղածը բավական էր ամբողջ Կովկասին մի քանի տարով:

Մի քանի այցելություններ և փոխայցելություններ, և ահա նորեն ընտանի շրջանումն եմ և բնավ օտարություն չեմ զգում:

Յարգելով հայկական ավանդությունը, այցելեցի և թեմական առաջնորդի տեղապահին, որ այդ ժամանակ մի վարդապետ էր, Յովնան Կարապետյան: Մի շուտ հափշտակվող երիտասարդ, որ շատ էր աշխատում մի որևէ գործ կատարել և սակայն գոհ չէր իր վիճակով: Թեև երիտասարդության մի մասից պաշտպանված էր, նա համոզված էր, որ առաջնորդի պաշտոնը շատ նեղ է իր համար և կարծում էր, որ Ամերիկայում կարող է ավելի օգտակար լինել:

— Ես հոն ավարտած եմ համալսարան, անգղերեն աղվոր գիտեմ, կապեր ունիմ ամերիկացիներուն հետ, շատ բան կրնամ ընել ազգիս համար,— կրկնում էր նա շարունակ: Բայց իմ տպավորությունն այլ էր: Կարծում եմ, լավ կլինեի, որ այդ մարդը թողներ սքեմը: Հոգևոր առաջնորդի պաշտոնը բնավ չէր համապատասխանում նրա աշխարհամոլ խառնվածքին...

Հայ ընտանիքի հետ ծանոթանալու դյուրությունն ինձ տրվեց Ազնավորյանների տունն, ուր հաճախ հրավիրվում էի: Այդտեղ, ի միջի այլոց, ծանոթացա պարոն Գրիգոր Չիլինգարյանի հետ, որ հայտնի է իբրև Վիկտոր Հյուգոյի տաղանդավոր և վաստակավոր թարգմանիչ: Չնայելով իր ավելի քան ութսունամյա հասակին, համակրելի ծերունին տակավին կայտառ էր: Ոչ պակաս տեսա նրա հասակակից հայտնի ֆրանս-հայկական բառարանի կազմիչ Մեսրոբ Նուբարյանին, որ այսօր էլ շարունակում է աշխատել:

Իր ընդհանուր գծերով հայ գերդաստանն Իզմիրում գրեթե նույնն է, ինչ որ Կ. Պոլսում, այն տարբերությամբ սակայն, որ ավելի պարզ է, եթե չասեմ, ավելի նահապետական: Այս տեսակետից կատարելատիպ կարող եմ համարել Ազնավորյանների ընտանիքը, որ, եվրոպական լավը յուրացնելով հանդերձ, պահպանել է հայ ցեղի ընտիր հատկանիշը՝ համեստությունը:

Կան, իհարկե, և՛ այլասերված հայեր, որոնք, ինչպես և ամենուրեք, ունին կույր սեր դեպի ամեն ինչ, որ օտար է: Երբեմն այդ սերը հասնում է ծիծաղելի չափերի: Փողոցներում ու կաֆեներում հանդիպում էի երիտասարդների, որոնք իրենց հագնվելու ձևով, քայլվածքով ու շարժումներով հերոսական ճիգեր էին անում նմանվելու անգլիացու կամ ամերիկացու: Եվ, իհարկե, նմանվում էին...

Ես հրավիրված էի մի ընտանիքի երեկույթի: Այնտեղ տեսա կատարյալ բաբելոնյան մի քառս:

Կան ընտանիքներ, որ հրավիրում են իրենց հարկի տակ առանց խտրության ամենքին, որ կրում է ֆրանսիացի, իտալացի, անգլիացի կամ ամերիկացի անունը:

Հայտնի է, որ այժմ Արևելքում եվրոպական ընտիր տարրերի հետ կան և բազմաթիվ արկածախնդիրներ: Պատերազմն ամենուրեք շատ հասարակական տականքներ է հատակից երես ձգել: Եվ ահա Եվրոպան, մանավանդ Անգլիան, մարդկանց պակասության պատճառով մեծ մասամբ այդ տականքներն է ուղարկում Արևելք: Ի՞նչ փույթ, որ նրանք այնտեղ պիտի բնականաբար գործադրեն իրենց վատթար բնազդները: «Վայրենի» ասիացիների վերաբերմամբ ներելի է ամեն ինչ:

Մի ընտանիքում ես ծանոթացա մի քնքուշ հայուհու հետ: Նրա սիրուն դեմքը սքողված էր թանձր մռայլությամբ:

Նա գիտեր Ալֆրեդ դը Մյուսեի թախծալի ոտանավորներն արտասանել հուզիչ զգացումով: Նա վիշտ ուներ: Մի ինչ-որ իտալական սպա, իբր թե կոմս, խաբելով անմեղ կույսին, գրավել էր նրա ջերմ սերը և հետը ամուսնացել: Հետո կողոպտել էր նրա գոհարեղենը ու փախել:

Ավա՛ղ, ես չնկատեցի, որ այդ տխուր օրինակը խրատական լիներ ուրիշների համար:

Հայ մայրերն են, որ վերջին տարիները ամենուրեք, ինչպես և Կովկասում, իրենց աղջիկներին մղում են օտարների գիրկը:

— Իմ փեսան անգլիացի է, իմ փեսան ամերիկացի է, իտալացի է, ֆրանսիացի է,— ասում են նրանք մի առանձին հպարտությամբ:

Եվ հայրերը բաժանում են մայրերի հրճվանքը...

ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինձ համար վերին աստիճանի հետաքրքրական էր գիտենալ ինչպես են վերաբերվում իրար հետ հույներն ու հայերը փոխադարձաբար:

— Գո՞հ եք հույն կառավարությունից,— հարցնում էի ես բոլոր դասակարգերի հայերին:

— Անպայման գոհ ու երջանիկ,— պատասխանում էին ամենքն անխտիր:

Սակայն կային առանձին անհատներ, որ անգիտակցաբար պղտորում էին ջուրը: Բանն այն է, որ հելլեն բարձր կոմիսարությունը գրավել էր մի քանի հայ հարուստների տներ: Այդ մարդիկ, մոռանալով մոտիկ անցյալի թուրքական բռնությունները, չէին կարողանում մի քիչ զսպել իրենց բնագործ և տներում ու շուկաներում պարսավում էին հույներին: Հարկավ բարի մարդիկ չէին զլանում Լուրերը տանել ուր հարկն է և այդպիսով գրգռել երկրի տերերին:

Բայց այդ բոլորը մեծ արժեք չունեին: Ինձ հարկավոր էր երկու ամենահին քրիստոնյա ազգերի փոխադարձ զգացումների հիմքը դիտել: Եվ ահա մի օր ես պատեհություն ունեցա այդ դիտելու:

«Չարթոնք» ընկերության թատերասերների խումբը պատրաստվում էր խաղալու «Չար ոգին» պիեսը «ի պատիվ հեղինակի»: Իզմիրում կան ընդամենը երկու թատերական սրահներ, մեկը քաղաքի ասիական մասում, մյուսը՝ քարափի վրա: Առաջինը մի անմաքուր քարվանսարա է, իսկ երկրորդը կատարյալ թատրոն՝ իր բոլոր հարմարություններով: Եվ ահա հույները այս թատրոնը հայ թատերասերներին զիջեցին գրեթե ձրի: Ներկայացումից մի օր առաջ Հովնան վարդապետն ինձ նախազգուշացրեց, թե հունական մետրոպոլիտ արքեպիսկոպոս Քրիստոսիմոսը ցանկություն է հայտնել թատրոն գալու: «Չարթոնք»-ին խնդրեցի սրբազանին տալ մի պատվավոր օթյակ:

Ներկայացման միջնադարներից մեկում ևս իմ բարձրաստիճան հյուրին բեմից ուղղեցի հետևյալ խոսքերը.

— Սրբազան Տեր, առաջին անգամն է, որ հունական օրթոդոքս եկեղեցու մի բարձրաստիճան պաշտոնյա բարեհաճում է ոտք դնել հայ թատրոն: Այդպիսով դուք հանդիսանում եք գաղափարակից մեր անմահ խրիմյան Հայրիկին, որ ասում էր. «Թատրոնը երկրորդ եկեղեցի է»: Ինձ համար մեծ պատիվ է ունենալ հյուր՝ Մեծ Հունաստանի արժանավոր զավակին, այն գեղարվեստապաշտ և գեղարվեստագետ Հունաստանի, որ համամարդկային գրականության, գիտությունների, թատրոնի և արվեստների մեծագույն վարպետներն է տվել մարդկության: Ձեր Արիստոտելին, Սոկրատին, Պլատոնին, ձեր Ֆիդիասին են աշակերտել բոլոր ազգերի հանճարներն ու տաղանդները: Մեծ է եղել Հունաստանը մարդկային մտքի ու հոգու արտահայտություններով այն ժամանակ, երբ այժմյան քաղաքակիրթ ազգերի նախահայրերը կիսավայրենի վիճակում էին: Եվ ես երջանիկ եմ ասելու, որ հայ ազգը մեծ Հունաստանի ամենաընդունակ և ամենաառաջադեմ աշակերտն է եղել:

Սակայն հույն ազգի փառքը միայն անցյալում չէ, այլև ներկայում և մանավանդ ապագայում: Այսօր այդ ազգը շատ ապացույցներ է տալիս մեզ հավատալու համար, որ հեռու չէ այն ժամանակը, երբ նա նորեն պիտի գրավե իր նախկին պատվանդանը ազգերի շարքում: Ես իբրև կյանքը դիտող մի անցորդ, առաջին անգամ գտնվելով մի հունական քաղաքում, տեսնում եմ շատերն այդ ապացույցներից: Կհիշատակեմ մեկը միայն նրանցից և այդ բավական է. այն իդեալական կարգապահությունը, որ տիրում է այժմ Իզմիրում: Դեռ երեկ, երբ այս քաղաքը գտնվում էր անիրավ հափշտակիչների ձեռքում, նրա փողոցները ներկվում էին մարդկային արյունով: Այսօր այստեղ տիրում է

կյանքի, գույքի ու պատվի կատարյալ ապահովություն: Դա հույն ազգի բարձր քաղաքականության նմուշն է: Եվ ինչպես չմաղթել, որ նա նորեն տիրանա իր բոլոր հայրենի ժառանգություններին:

Սրբազան Տէր. Իզմիրի հայությունը երախտագետ է հույն ազգին, հույն իշխանությանը և մանավանդ հույն զորքերին, որ իրենց հերոսական հաղթանակներից հետո այսօր, սովորական կյանքում այնքան համեստ են և այնքան սիրալիր, որքան կարող են լինել միայն մեծ ժողովուրդների զորքերը...

Հետևյալ օրը Հելլեն բարձր Կոմիսարության Մամուլի Դիվանի և գրաքննության տնօրենից ստացա հետևյալ նամակը հունարեն Լեզվով.

«Մծարգո տեր, երեկ բարեբախտություն ունեցա հանդիսատես լինելու ձեր գեղեցիկ ու տպավորիչ գործի ներկայացումին: Կլամենայի խորին հարգանքներս հայտնել ձեր հանդեպ և այս առիթով շնորհակալ լինել հելլեն մարդասեր ժողովրդի կողմից ձեր այն բարյացակամ վերաբերմունքի համար, որով արտահայտվեցիք ի նպաստ Հունաստանի:

Հելլեն ազգը կատարելապես իրագել է այն մեծ ջանքերին, որոնցով բոլոր հայ վիպագիրները, թատերագիրները, բանաստեղծները աշխատում են ձեր մարտիրոսացած ազգի հայրենի վերածնունդի համար...

Ինչպես Հունաստանի, նույնպես և Հայաստանի թատրոնը մի երկրորդ եկեղեցի էր, որտեղից հավատացյալները, մարտիրոսները և գերիները լույս էին տեսնում և քաջալերվում էին ազատության պայքարի միջոցին:

Կիսնդրեմ, մեծարգո տեր, ընդունել իմ արտաքու կարգի հարգանքների և զգացմանց արտահայտությունը:

Միքայել Ռոդաս

17 Նոյեմբերի 1920 Իզմիր

Մյուս օրը Իզմիրի, ապա Աթենքի հունական թերթերը, տպելով իմ ճառը Պ. Ռոդասի նամակի հետ, իրանց ջերմ համակրանքն արտահայտեցին հայ ժողովրդի հանդեպ: Իսկ երբ ես անձամբ գնացի իմ փոխ-շնորհակալությունը հայտնելու, Պ. Ռոդաս հույն մտավորականության կողմից ինձ հրավիրեց Աթենք:

— Իբրև հայ գրականության ներկայացուցիչ,— ասաց նա,— դուք կլինեք հույն մտավորականության հյուրը, և մենք ձեր տրամադրության տակ կդնենք մեր լավագույն շոգենավերից մեկը:

Համանման վերաբերմունք դեպի հայերը ես տեսա բոլոր հույների կողմից, որոնց հանդիպեցի իմ երկամյա ճանապարհորդության ընթացքում:

Պ. Ռոդասի նամակը մի նոր փաստ է ինձ համար նորեն պնդելու, որ գրականությունը, թատրոնն ու արվեստներն են ազգերի հարաբերությունները մաքրելու և բյուրեղացնելու լավագույն միջոցները: Հայ-վրացական տխուր հիշողության արժանի ընդհարումների ժամանակ միայն վրացի և հայ գրական ու թատերական գործիչներն անխախտ պահեցին իրենց փոխադարձ բարեկամությունը:

Իզմիրում գտնված միջոցին այնտեղ էր Աթենքի թատերական խումբը: Մի երկու անգամ, հարգելով խմբի հրավերը, գնացի նրա ներկայացումներին և ուրախությամբ տեսա, որ հանդիսականների մի պատկառելի մասը հայեր են: Այս առիթով հույն դերասաններն ինձ արտահայտեցին իրենց խորին հաճույքը: Ի դեպս հույներն ունեն խոշոր բեմական ուժեր, որոնցով կարող են պարծենալ, իսկ դերասանուհի տիկ. Կիվելին կարող է հավասարվել եվրոպական որևէ առաջնակարգ թատրոնի աստղին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իզմիրն իր դիրքով գեղեցիկ է: Նրան գեղեցկացնողն իր հրաշալի ծովածոցն է: Իբրև նավահանգիստ նա համարվում է առաջնակարգ թե՛ իր ընդարձակությամբ և թե՛ իր բնական պատկերների ապահովությամբ: Միակ թերությունն այն է, որ շոգեկանները կանգնում են քարափից հեռու: Դա բավական դժվարացնում է ճամփորդների երթևեկը, ենթարկելով նրանց փոքրիկ անախորժությունների, ինչպես, օրինակ, հույն ու թուրք նավակավարների և բեռնակիրների ագահությանն ու խաբեբայությանը: Իզմիր այցելող ճամփորդը այդ գիշակերների համար մի որս է և, որքան ևս նա զգույշ լինե, չի կարող խուսափել նրանց հարստահարությունից:

Քաղաքը տարածվում է ծովածոցի ուղղությամբ: Տները, անֆիթեստրի ձևով հետզհետե վեր բարձրանալով, ծածկում են կռնակի լեռան լանջը, ուսկից բացվում է մի սքանչելի տեսարան դեպի ծովն ու ցամաքը:

Փողոցները շատ նեղ են, սալահատակները վատ, բայց մի աստիճան պակաս կեղտոտ, քան Կ. Պոլսում: Ընդհանուր տպավորությունն Իզմիրի այնպես է, որ, կարծես, դա քաղաք չէ, այլ մի հսկայական քարվանսարա բազմաթիվ բաժանմունքներով և միջանցքներով: Այստեղ ճամփորդն իրան զգում է թեև ավելի ընտանի, քան Կ. Պոլսում, բայց մի տեսակ ճնշված:

Փողոցներից միայն մի քանիսն են հարմար կառքերի երթևեկության համար: Բացի քարափից, գեղեցիկ շենքեր և կանոնավոր պողոտաներ կան միայն քաղաքի աջ թևի վրա, որ անգլիական արվարձան է կոչվում:

Կորտելիա անվանված արվարձանը գտնվում է Իզմիրի դեմոուդեմ, ծովածոցի մյուս կողմում: Դա մի գեղեցիկ վայր է, բնակության համար ավելի հաճելի, քան Իզմիրը: Այստեղ փողոցներն ավելի լայն են, գուցե ավելի մաքուր, տներն ավելի գեղեցիկ: Հաղորդակցությունը քաղաքի և Կորտելիայի միջև և ծովային է, և ցամաքային: Գերադասելի է առաջինը:

Իզմիրը սրճարանների քաղաք է և քարափը՝ նրանց գլխավոր կենտրոնը:

Օրվա գլխավոր մասը իզմիրցին այնտեղ է անցկացնում: Նրա համար սրճարանը թե՛ զբոսավայր է, թե՛ շուկա կամ բորսա է, թե՛ մի տեսակ քաղաքական կլուբ:

Նարդին իզմիրցու կիրքն է, նարգիլեն՝ նրա «աղայության» զարդը: Մեկը խաղում է դերասանի ոգևորությամբ, մյուսը ծխում է կրոնական ջերմեռանդությամբ: Չկա ավելի հանդիսավոր և միևնույն ժամանակ մի քիչ կոմիկական պատկեր, քան իզմիրցու դեմքը, երբ նա նարգիլ է ծխում, մանավանդ երբ ծխողը հայ է կամ եվրոպացի: Միևնույն նարգիլեն սրճարանում օրվա ընթացքում ծխում են տասնյակ մարդիկ առանց ախտահանվելու, կամ նույնիսկ մաքրվելու: Դժվար չէ երևակայել, թե նարգիլեն Արևելքում առհասարակ ինչ ոյուրին միջոց է վարակիչ ախտերի տարածման համար:

Հույներն ու հայերը խոսում ու վիճաբանում են չափազանց բարձրաձայն: Եվ խոսում են ոչ միայն լեզվով, այլև ձեռներով, ոտներով, մարմնի ամբողջ ուժով: Երբեմն ինքնամոռացության մեջ նրանք այնպես են բռնցքահարում սեղանը, որ սուրճի գավաթներն օդ են թռչում: Ոգևորությունը հավասար է բոլոր դեպքերում. միևնույնն է՝ խոսակցության կյուրը Եվրոպայի քաղաքականությունն է, թե՛ իզմիրի թուզը:

Թուրքերն անհամեմատ ավելի հանգիստ են և ծանրաբարո իրենց սրճարաններում: Առօրյա ամենահասարակ կյուրերի մասին անգամ խոսելիս, նրանց դեմքը սքողված է փիլիսոփայական խորհրդավորությամբ: Լեզվի դերը նրանց մոտ մեծագույն դեպքերում կատարում են գլխի հպարտ ու հանդարտ շարժումները և դեմքի խաղը: Դիտելով հեռվից նրանց արտաքինը, դժվար է երևակայել նրանց մտքի ոչնչությունը և հոգու աղքատությունը: Այս է, որ այնքան խաբում է եվրոպացի ճամփորդներին, որոնք արևելցու յուրաքանչյուր շարժման մեջ իսկ փիլիսոփայություն են տեսնում...

Հրեաները արտաքուստ աչքի են ընկնում իրենց ցեղային հատկություններով, չնայելով, որ Իզմիրում նրանց թիվը երեք անգամ հայերից ավելի է: Առհասարակ հրեան, ուր որ լինե, ամեն կերպ աշխատում է թաքցնել իր ցեղային անհատականությունը և միշտ հարմարվում է միջավայրին միայն արտաքինով:

Թանձր ծխով տոգորված մթնոլորտ, հռիռոց, քրքիջ, խլացուցիչ նվագարան, «կակավետ» վաճառողների գոռգոռոց, կոշիկ մաքրողների անվերջ և ծանձրալի դիմումներ,— ահա Իզմիրի սրճարանների ընդհանուր պատկերը:

Իզմիրը Կ. Պոլիսի մանրանկարն է այն առավելությամբ, որ բարքուվարքերի տեսակետից նա այնչափ ապականված չէ, որչափ օտտոմանյան մայրաքաղաքը: Այդտեղ գոնե փողոցներում ու սրճարաններում և այլուր պոռնկությունը այնքան բարձր չի աղաղակում, որքան Կ. Պոլսում:

Գնում ենք Եգիպտոս...